2021, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (596)

Բիւզանդա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ծնորհալոր Ամենայն եւ Սուրբ Ծնունդ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

20 դեկտեմբերի

ԻԻՀ Մեջլիսի Իրան–Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի Իրան–Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի անդամներին:

Ողջույնի իր խոսքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ հաստատված բարեկամական հարաբերություններն ու սերտ փոխգործակցությունն ունեն հարուստ

պատմություն: Երկու երկրների կապերի խորացման եւ ամրապնդման գործում, ըստ Նորին Սրբության, իր մեծ նպաստն է բերում նաեւ Իրանի հայ համայնքը, որն Իրանի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ կարողացել է պահպանել իր ազգային մշակույթն ու արժեքները:

Իր հերթին Մեջլիսի Իրան–Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ղեկավար Սեյեդ Մեհդի Ֆարշադանն Ամենայն Հայոց Հայրապետին տեղեկություններ փոխանցեց իրենց այցի ծրագրերի եւ ակնկալիքների վերաբերյալ: Վերջինս հայ-իրանական բարեկամական կապերի խորացման գործում կարեւոր նկատեց նաեւ երկու երկրների հոգեւոր առաջնորդների դերակատարությունը: Պրն Սեյեդ Մեհդի Ֆարշադանը, անդրադարձ կատարելով տարածաշրջանային իրավիճակին, ընդգծեց հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը:

Զրույցի ընթացքում Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ արցախյան պատերազմի եւ հետպատերազմյան դժվարին ժամանակաշրջանում Հայաստանին ցուցաբերած զորակցություն համար:

Իր բարեմաղթանքները բերելով Իրան–Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի անդամներն՝ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ երկու երկրների միջխորհրդարանական հանդիպումները բարի արդյունքներ կարձանագրեն ի նպաստ բարեկամ ժողովուրդների փոխհարաբերությունների առավել սերտացման:

21 դեկտեմբերի

Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս կենտրոնական շրջանի ղեկավար տիկին Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս կենտրոնական շրջանի ղեկավար տիկին Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, անդրադարձավ հայ-ֆրանսիական բարեկամական ամուր հարաբերություններին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ Հայոց ցեղասպանությունից հետո Ֆրանսիայում ապաստանած հայորդիների նկատմամբ Ֆրանսիայի իշխանությունները մշտապես ցուցաբերել են հոգածու վերաբերմունք: Այս առիթով Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ, որ ֆրանսահայությունը եւս իր մեծ նպաստն է բերում հայ-ֆրանսիական բարեկամական կապերի զորացման գործում:

Հայոց Հայրապետը, ի դեմս տիկին Վալերի Պեկրեսի, իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին եւ ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ Արցախի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված ջանքերի, ինչպես նաեւ 44–օրյա պատերազմի եւ հետպատերազմյան շրջանում Հայաստանին ցուցաբերած աջակցության համար՝ կարեւոր նկատելով Ֆրանսիայի Սենատի կողմից Արցախի անկախության ճանաչման բանաձեւի ընդունումը:

Տիկին Վալերի Պեկրեսը, ներկայացնելով պատվիրակության անդամներին, խոսեց հայ համայնքի հետ ունեցած փոխհարաբերությունների, կրթության եւ մշակույթի ոլորտում Հայաստանի հետ փոխգործակցության տեսլականների մասին՝ կարեւորելով երկու երկրների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունների առավել խորացումն ու ամրապնդումը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգության պահպանության, պատերազմի ընթացքում վնասված հայկական եկեղեցիների վերականգնման խնդրին՝ կարեւորելով միջազգային կառույցների միջնորդական ջանքերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց մարտական դիրքեր

Սուրբ Ծննդյան տոնին ընդառաջ՝ դեկտեմբերի 31-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Մովսես վրդ. Սարգսյանի ուղեկցությամբ այցելեց Հայաստանի Հանրապետության արեւմտյան սահմանագծի մարտական դիրքեր:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով սահմանապահ զինվորականներին, մեծապես արժեւորեց հայ զինվորի եւ հրամանատարի անձնվեր ու անմնացորդ ծառայությունը հայրենիքին: Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ, որ Հայոց բանակի քաջարի մարտիկները մշտապես Հայոց Հայրապետի եւ հայ եկեղեցականների աղոթքներում են:

Վերջում Նորին Սրբությունը սրբապատկերներ, խաչեր եւ աղոթագրքեր ընծայեց զինվորներին՝ բարեմաղթելով անփոփոխ հավատք եւ խաղաղ ծառայություն:

Սարկավագական ձեռնադրություն՝ Ս. Ստեփանոս Նախավկայի տոնին

Դեկտեմբերի 25-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակության օրը, որը նաեւ Եկեղեցու անդաստանում ծառայող սարկավագների տոնն է:

Բեկրառատ տոնի առիթով Արմավիրի թեմի Ս. Աստվածածին եկեղեցում (ք. Էջմիածին), Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանի ձեռամբ սարկավագական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի 19 սան:

Սուրբ Պատարագի ընթացքում՝ ձեռնադրության սուրբ խորհրդի ավարտին, սրբազան հայրը Ս. Ստեփանոսի մասունքակիր աջով օրհնեց նորընծաներին, այնուհետեւ անդրադարձավ սրբի վարքին ու քրիստոնեական եկեղեցու նահատակներին՝ ի մասնավորի նշելով. *«…Այդ նահատակների շնորհիվ է, որ մենք այսօր կանք իբրեւ քրիստոնյաներ, մեր Եկեղեցին կա, որովհետեւ, ինչպես Տերտուղիանոսն էր ասում, Եկեղեցու հիմքը մեր մարտիրոսների արյունն է: Ճիշտ այնպես, ինչպես մեկ տարի առաջ Արցախի, Հայաստանի սուրբ հողի համար նահատակված հազարավոր մեր որդիներն ու քույրերը, մեր զավակներն ու դուստրերը նահատակվեցին՝ պահպանելու համար հայրենի հողը եւ հավատքը: Նշանակում է՝ մենք պարտականություն ունենք նրանց հանդեպ: Պիտի խոնարհվենք նրանց սուրբ հիշատակի առջեւ, որ ապրենք մաքուր ու ճշմարիտ կյանքով եւ հեռու մնանք սատանայական բոլոր խաբեություններից»*:

Դիմելով նորաձեռնադրյալ սարկավագներին՝ Վազգեն եպիսկոպոսը հորդորեց. *«Այստեղ տեղին է, սիրելի՛ սարկավագներ, Ավետարանից հիշել մեր Տիրոջ պատգամը, որն ասում է. «Եթե մեկն ուզում է հետեւել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը եւ գա իմ հետեւից (Մատթեոս ԺԶ 24)»: Ես հավատում եմ, որ դուք լսել եք հենց այս պատգամը, վերցրել եք ձեր խաչը ու եկել եք Քրիստոսի հետեւից: Կամավորության սկզբունքով դուք եք ընտրել այս ծառայությունը: Ձեր հետագա ամբողջ ծառայության ընթացքում ինքներդ եք կերտելու այդ ճանապարհը խաչի, որով դուք շարժվելու եք: Իսկ այդ ճանապարհը, որով քայլելու եք, պիտի լինի աղոթքով, խոնարհումով, ծառայասիրությամբ եւ նվիրումով: Դուք պետք է լինեք սիրով լեցուն հանդեպ հավատացյալ ժողովուրդը եւ ընդհանրապես մարդկությունը: Այդ մեծ սերն է, որ ձեր մեջ պիտի հաստատի խաղաղությունը, աստվածային այն ուժն ու զորությունը, որ ողջ ծառայության ընթացքում ձեզ առաջնորդելու են: Եղեք ողորմած, ներողամիտ, եղեք միշտ մարդկանց հասկացող»*:

Քարոզի ընթացքում պատարագիչ սրբազանը նաեւ իր խորին երախտագիտությունը հայտնեց սարկավագների ծնողներին՝ իրենց զավակներին Քրիստոսի Եկեղեցուն ընծայաբերելու համար:

Վերջում սրբազանն իր շնորհավորանքներն ուղղեց Մայր Աթոռի կրթական հաստատությունների տեսչությանը եւ միաբանությանը՝ Սուրբ Ստեփանոսի տոնի եւ սարկավագական ձեռնադրության առիթով:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորոգ ձեռնադրության արժանացած Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի 19, ինչպես նաեւ Զ լսարանի սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Շահե ծ. վրդ. Անանյանի:

Հանդիպմանը հայր Շահեն Նորին Սրբությանը ներկայացրեց նորընծա սարկավագներին՝ վստահեցնելով, որ նրանք պատրաստ են ս. Ստեփանոսի նման իրենց անձերը նվիրաբերել հանուն Քրիստոսի:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց ճեմարանական սարկավագներին՝ շնորհավորելով Ե լսարանի սաներին սարկավագ ձեռնադրվելու կապակցությամբ: Նորին Սրբությունը պատգամեց ուսանող սարկավագներին ուսումնառության ընթացքում գիտելիքներ ամբարել, որպեսզի կարողանան իրենց նվիրական ծառայությունը բերել Եկեղեցուն եւ հայ ժողովրդին: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հայ ազգի համար ստեղծված ծանր ու դժվարին ժամանակներում առավել անհրաժեշտ է դառնում հոգեւոր խնամքի եւ կրթադաստիարակչական գործունեության իրականացումը հայորդիների կյանքում: Այս առիթով Նորին Սրբությունը հորդորեց ճեմարանական սարկավագներին լավագույնս պատրաստել իրենց անձերն այդ սրաբազան առաքելությունն իրականություն դարձնելու համար:

Կարգալույծ է հռչակվել Ղազար քհն. Պետրոսյանը

Դեկտեմբերի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մասյացոտնի թեմի հոգեւոր սպասավոր Ղազար քհն. Պետրոսյանը: Տնօրինության համար հիմք են ծառայել Ղազար քահանայի՝ հոգեւոր վերադաս իշխանության նկատմամբ դրսեւորած անհնազանդությունը, եկեղեցականի կոչմանն ու առաքելությանն անհարիր կուսակցական գործունեությամբ ու քարոզչությամբ զբաղվելը եւ Մայր Աթոռի կարգապահական հանձնախմբի հետ հանդիպելու հրավերները մերժելը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Հայկ Պետրոսյան ավազանի անունով:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՊԻՂԱՏՈՍԸ

Hastings-Ç Dictionary of Christ and Gospels-ի (Հասթինգս. Քրիստոսի եւ Ավետարանների բառանան) մեջ Ալեքսանդեր Սոութերն իր ուսումնասիրությունը Պիղատոսի մասին ավարտում է հետեւյալ բառերով. «Պիղատոսը նույն նյութից չի սարքած, ինչ հերոսները»: Բոլորը չէ, որ կարող են հերոս լինել: Բայց արժե՞ հասնել նրան, որ ասեն, թե Պիղատոսն անսիրտ մարդ էր՝ զուրկ քաջությունից, պատեհապաշտ ու վախկոտ մի անձնավորություն, որին ամեն անգամ հիշում են, երբ մտածում են ձեռքերը լվալու՝ նրա արարքի մասին:

Պիղատոսի դատավարության վերաբերյալ Հովհաննեսի պատմության մի մանրամասն մեզ թույլ է տալիս պատասխանելու այդ հարցին: Մեկ անգամ եւս չորրորդ Ավետարանը մի շատ ավելի հանգամանալից շարադրանքում մեզ տալիս է ավելի արժեքավոր տեղեկություններ, քան Մատթեոսի, Մարկոսի ու Ղուկասի Ավետարանները. հարուստ երկխոսություն, զանազան պատասխաններ, որի մասին այնպիսի քննադատական հեղինակ, ինչպիսին Էռնեստ Ռընանն է, ասում է. «Շարադրանքը կատարյալ համաձայնության մեջ է այն բանի հետ, ինչը պատմությունն է մեզ հաղորդում երկու խոսակիցների դրության մասին»:

Ըստ Հովհաննեսի՝ ունկնդրությունը (audience) սկսվում է հռոմեական կառավարչի տված մի հարցով: Պիղատոսը հրեաներից, քահանայապետերից ու դատական կատարածուներից պահանջում է ճշտել ամբաստանության հիմնական կետը: Դա միանգամայն արդարացի էր ու համապատասխան սովորույթներին. իր գործը կատարելու համար դատավորը պետք է իմանա, թե ինչ հայց է ներկայացվում պատասխանող կողմին: Բայց, ահա, հրեաները տալիս են զարմանալի պատասխան: Նրանք առարկում են. «Եթե այս մարդը չարագործ չլիներ, ապա նրան քո ձեռքը չէինք մատնի»: Այդ պատասխանի տոնը վիրավորական է: Ո՞ւր է հարգանքը, որ պիտի տածվի հռոմեական կառավարչի հանդեպ: Մենք երբեք նման անքաղաքավարի ձեւով չէինք դիմի իշխանություններին, որպեսզի վերջիններս ընդառաջեին մեր հայցադիմումին: Այդ մեծամտությունն էլ ավելի զարմանալի է, քանզի սանհեդրինի (հրեաների քաղաքական, կրոնական եւ իրավաբանական գերագույն օրգան) հրեաները մեծ մասամբ համալրվում էին Երուսաղեմի ազնվականներից, որոնք համագործակցում էին հռոմեացիների հետ, ուստի ինչպե՞ս բացատրել այդ մեծամտությունն ու անհարգալից վերաբերմունքը:

Հավանաբար՝ հրեաների դժգոհությամբ: Նրանք Պիղատոսից սպասում էին մի վարվելակերպ, որը նա չի որդեգրում: Նրանք սպասում էին միջամտության որոշակի ձեւի, բայց նրա առաջին խոսքերը նրանց շփոթեցնում են: Նրանք հիասթափված են նրա պահանջից, ու այդ հիասթափության մեջ մոռանալով տարրական քաղաքավարության մասին՝ կոշտացնում են իրենց դիրքորոշումը:

Խոսքերի այդ փոխանակությունը, չասելու համար այդ կռիվը, անբացատրելի է մնում, մինչեւ որ այնտեղ կարդում ենք մարդկանց մի երկխոսություն, որոնք իրար տեսնում են առաջին անգամ: Բայց ենթադրենք, թե Հովհաննեսը մեզ ներկայացնում է մի խաղ, որտեղ ամեն մեկը, որոշակի ժամանակով, վարվում է շրջահայացորեն: Դրանից հետո այդ, այսպես կոչված, «նյութի մեջ մուտքը» պարզաբանվում է. այն այդպիսին է միայն ընթերցողի համար, որին Հովհաննեսը դնում է կատարվող դրամայի ունկնդրի դերում: Հրեաների եւ Պիղատոսի համար այն շարունակություն է… Դա նշանակում է, որ եղել են մեկ կամ մի քանի նախնական բանակցություններ սանհեդրինի ղեկավարների ու հռոմեական կառավարչի միջեւ: Պայմանավորվել էին ու ամրագրել վարվելակերպը: Դա այն եզրակացությունն էր, որին մենք հանգել էինք՝ խոսելով երկու՝ քաղաքացիական ու կրոնական դատավարությունների մասին: Պիղատոսը պահանջել էր ազգի երեւելիների քվեարկությունը՝ ընդդեմ Հիսուսի: Եվ, պետք է լրացնել, դրա փոխարեն Պիղատոսը պարտավորություն էր վերցրել: Նա խոստումներ էր տվել ու բանավոր կնքել մի պայմանագիր, որի կետերն ի հայտ են գալիս հրեաների հակազդեցության մեջ՝ կառավարական պալատի առաջ: Ի՞նչ է անում Պիղատոսը: Նա կատարում է գործի ունկնդրություն: Հրապարակավ մեղադրանքին պիտի հաջորդեր դատավորի հարցաքննությունը՝ նախքան մեղադրյալին դատավճիռ ներկայացնելը: Այսպիսով՝ Պիղատոսն օրենքին համապատասխան դատավարություն է սկսում: Ու դա է, որ զայրացնում է հրեաներին: Այստեղից պիտի եզրակացնել, որ հրեաների հետ այդ գաղտնի տեսակցության մեջ Պիղատոսը համաձայնել էր նման պայմանի. «Ես չեմ ուսումնասիրի այդ դեպքը խորությամբ:

➥ էջ 5, 6

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12–23

Ժ.

Գրական հերոսի բնավորության եւ հարցադրումների միանգամայն այլ նախասիրություն ունի Մուշեղ Գալշոյանը: Նա ստեղծում է 20-րդ դարի հայկական կյանքին բնորոշ ազգային նկարագիր ունեցող կերպարներ: Այնպիսի մարդկանց կերպարներ, որոնք տեսել են եղեռն ու ավերածություն, ծննդավայրի կործանում ու գաղթ եւ ապա նաեւ նոր բնակավայրում գցել նոր կյանքի հիմքերը: Հայաստանի պատմական բախտը՝ եղեռնը, ավերածությունները, գաղթը, այնուհետեւ ծննդավայրից հեռու ծննդավայրի կարոտն իրենց մեջ անթեղած, հայրենիքի հեռու ու քարքարոտ մի անկյունում նոր կյանք հիմնող մարդիկ են նրա հերոսները: Այդ հերոսների ճակատագրի մեջ Հայաստանի պատմությունն է:

Գալշոյանը յուրովի շարունակում է հայ գրականության այն գիծը, որն ուղղված է դեպի հայրենի բնաշխարհն ու ժողովրդի մարդիկ, դեպի նրանց կյանքն ու կենցաղը, սովորություններն ու ազգային նկարագիրը: Պատմական հայրենիքը կորցրած գաղթական հայեր են Գալշոյանի հերոսները եւ գաղթական հայերի շառավիղներ: Դժվարին կյանքի, անասելի կորուստների, անամոք կարոտների եւ հույսի ու հավատի տեր պարզ ու հասարակ մարդիկ, ովքեր իրենց գրական հաջող կերպավորումն են ստացել «Ձորի Միրոն», «Կածանի ճամփորդներ» վիպակներում, «Բովտուն» վեպում, «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարում, հատկապես այդ շարքի «Կանչը», «Քեռի Թորոսը» գործերում եւ մի քանի ակնարկներում:

«Ձորի Միրոն» վիպակը զարգանում է հերոսի ներքին խոսքի աստիճանական ծավալմամբ: Ստեղծվում է բովանդակության երկու բացվածք՝ վերհուշի եւ դրանից բխող մտահանգումների, ինչն իբրեւ ապրված խորհուրդ եւ կենսափիլիսոփայություն՝ Միրոն ժառանգում է որդուն: Բացվում են Ձորի Միրոյի կյանքի փակագծերը, որոնց փակ ապրումները որպես շաղախ լցվում են նրա ու որդու միջեւ եւ նրանց՝ որպես միեւնույն պատի երկու քար, ձուլում իրար:

Միրոյի միտքը թափառում է Երկրում՝ կորցրած ծննդավայրում, եւ ծանոթ մարդկանց ու ապրված իրականության պատկերների միջոցով վերակոչում արդեն պատմություն դարձած կյանքը: Ապրում է Ձորի Միրոն՝ երազի մեջ պահած հեռու մի երկիր, մի տխրամած կարոտ, որը եւ իր կյանքն է ու անցյալը, եւ իր ժողովրդի: Այդ անցյալն է, որ կենսունակ արմատի նման նրան կապում է իր հողին եւ այդ անցյալով ապրեցնում նրա ներկան: Այդ ներկան եւս դժվարին մաքառում է գոյատեւման ու հաստատման համար. նոր հիմնադրած գյուղում Ձորի Միրոն առաջինն է ծուխ հանում իր երդիկից եւ ամեն ինչ կորցնելուց հետո անգամ՝ մտածում կյանքը նորից

սկսելու մասին: «Ձորի Միրոն» վիպակի հետ օրգանական կապ ունի հաջորդ՝ «Կածանի ճամփորդներ» գործը: Դեպքերի վայրը նույն Քարագլուխ գյուղն է, հերոսները՝ նույն գաղթականները, Ձորի Միրոյի սերունդը: Հեղինակն այստեղ չի առանձնացնում որեւէ կերպար, այլ լայն ընդգրկումով ներկայացնում է այդ մարդկանց կյանքն ու կենցաղը, խոսքն ու զրույցը: Հոգեբանությամբ բավականին իրար նման, արտաքուստ բավականին տարբեր մարդիկ են նրանք՝ Կռպեն, որը քար է աղում, որ հող ստեղծի, Օսոն, որը շարունակ ինքն իր մեջ զրույց է անում աշխարհի ու քարերի հետ, Նոհոն, որը խորհրդանշում է անցյալն ու ներկան, հովիվ Ավգին, սայլապան Արոն, Վարդո մարեն եւ էլի ուրիշներ: Հեռացող մի սերնդի ներկայացուցիչներ են նրանք, որ իրենց խոսքի, կենցաղի, պատմությունների, հիշողությունների մեջ պահում են կորուսյալ մի աշխարհի վերջին հիշատակները: Այդ հիշատակների կորուստը կսկիծ ու մորմոք է կուտակում հաջորդ սերնդի էության մեջ, քանի որ այդ կորուսյալ աշխարհը նրանց համար կար իրենց հայրերի ու պապերի գոյությամբ: Իսկ նրանց հեռանալուց հետո անցյալը կարծես դադարում է սովորական լինելուց եւ դառնում որոնվող կենսագրություն: Իսկ այդ կենսագրությունը Ձորի Միրոյի, Նոհոյի եւ մյուսների կյանքն է: Նոհոյի մահից հետո կորստի ու կարոտի նրբին մի շաղախով ձեւավորվում է հետեւյալ միտքը. «Ասեք, որ թաղեցինք արեւի տակ եղած վերջին ճախրկանցուն՝ մի գյուղ աշխարհ, մի հին ադաթ, լեզվի անուշ մի երանգ»:

Հերոսների այդ պատկերաշարը շարունակվում է նրա «Ծովասարի Օհանը», «Թաթոն», «Դավոն», «Կանչը», «Քեռի Թորոսը» պատմվածքներում: Այս սերնդի մարդկանց կյանքի հոգեբանությունն ու անելիք գործը հատկապես ցայտուն դրսեւորում են ստացել «Քեռի Թորոսը» պատմվածքում: Գալշոյանն այստեղ խտացրել է իր հիմնական գաղափարներից մեկը: Քեռի Թորոսը հիվանդանում է կոկորդի քաղցկեղով. նրան թվում է, թե կոկորդը սեղմող այդ ճյուղավոր հրեշն իր թշնամին է, որ իրեն հալածեց հայրենի երկրից, ավերեց ու հրկիզեց ամեն ինչ եւ հիմա եկել դարանակալել է կոկորդում, որ մի օր խեղդի իրեն: Քեռի Թորոսը գտնում է մոռացված եւ կախիչի տեղ օգտագործվող ժանգոտ դաշույնը, այն սրում ու փայլեցնում եւ հարմար մի պահի խրում իր կոկորդում թաքնված թշնամու մարմնի մեջ: Ինքնասպանության գիտակցություն Քեռի Թորոսի մեջ բացարձակապես չկա: Նա լրիվ համոզված է, որ իր անարգ ոսոխին է սպանում: Գալշոյանը կենսական հավաստի պատմությամբ ստեղծել է հայրենիքից վտարված սերնդի հոգեբանությանը բնութագրական ուշագրավ մի գործ՝ արդար վրեժի թեմայով:

Այս սերնդի բոլոր ներկայացուցիչները կյանքից հեռանում են ծննդավայրի ու մանկության հիշատակների անփարատ կարոտն իրենց հոգու մեջ, եւ մի պահ նույնիսկ նրանց թվում է, թե իրենց մահը ոչ թե մահ է, այլ երազի շարունակություն, որ նրանց պետք է վերադարձնի իրենց հայրերի երկիր («Դավոն»):

Գալշոյանը նաեւ այս սերնդի մարդկանց հոգեբանական նուրբ զգացմունքների պատկերներ է վերակոչում: Այս առումով հրաշալի է «Կանչ»-ը: Դա հեռավոր երկրում ձեւավորված եւ գաղթի ճանապարհին կորած մանկության տարիների սիրո կանչն է, որ հանկարծակի արթնանում է տարիներ հետո իր կյանքի մայրամուտին հասած մարդու էության մեջ: Մանկության ու ծննդավայրի հետ կորցրած սիրո հարությունը նոր երազներ է արթնացնում Ձորոյի հոգնած մարմնում:

Այս ստեղծագործություններով կարոտի երգ է հյուսում Գալշոյանը. կարոտի երգ՝ հեռվում մնացած ծննդավայրի, այդ ծննդավայրի կորստի եւ կյանքից հեռացող մի սերնդի մասին, որի մեջ դեռեւս ապրում էին կորստի մատնված ծննդավայրի հիշատակները: «Բովտուն» վեպում եւս, ուր պատկերված է մեր օրերի գյուղական կյանքի առօրյան, նրբորեն շարունակվում են այդ կարոտի նվագները եւ ձուլվում նոր կյանքի կառուցման երգերին: Գյուղի աշխատավորներն են վեպի հերոսները: Աշխատանքային առօրյան եւ հարաբերությունները դառնում են այն գլխավոր միջավայրը, որի մեջ գործում են նրանք:

Այս վեպում եւս, ինչպես եւ «Կածանի ճամփորդները» վիպակում, Գալշոյանը ոչ թե միագիծ է զարգացնում գործողությունը՝ ընտրելով մեկ կամ երկու գլխավոր հերոսի, այլ բազմապլան ու բարդ: Նրա վեպում եւս գլխավոր հերոսներ, ըստ էության, չկան, չկան նաեւ երկրորդական հերոսներ: Նրա ներկայացրած բոլոր հերոսներն էլ կարեւոր են եւ ամբողջական խմբանկարով ներկայացնում են գյուղական կյանքին բնորոշ բնավորություններ: Առանձին հերոսը նախ բարդ նկարագիր ունի ինքն իր ներսում եւ ապա բազմանիստ ու արտաքուստ կերպավորման խառն ու ընդմիջված ընթացք՝ ամբողջ վիպական հյուսվածքի մեջ: Մեր աչքի առջեւով խառը հաջորդականությամբ անցնում են պետական տնտեսության տնօրեն Եղիա Կիրակոսյանը, գյուղատնտես Վիրաբ Բադալյանը, գործավորներ Բագրատը, Ներսեսը, Երեմը, Սանթրոն, Արտուշը, բրիգադիր Մարուխյանը, պառավ Ջանանը, երիտասարդներ Արման, Նազիկը, Վարոսը, Միրաքը, Կարոն եւ էլի ուրիշներ:

Հերոսներին խիստ ընդգծված գլխավորների ու երկրորդականների բաժանման բացակայության հետ մեկտեղ՝ այս վեպի համար կարեւոր է նշել նաեւ այն, որ Գալշոյանը, ընդհանուր առմամբ, իր հերոսներին չի բաժանում նաեւ դրականների ու բացասականների: Մնալով բնականության սահմաններում՝ ռոմանտիկական հայեցակետով նա չի կտրում մի հերոսի իր շրջապատից ու իդեալականացնում կամ հակառակը՝ խտացնում բացասական հատկանիշեր: Կերպարների՝ կյանքից չեկող ծայրահեղացումները խորթ են նրան, քանի որ նա հետամուտ է կյանքի պատկերման բնականությանը:

Վեպի հիմքը գործողությունների, հարաբերությունների այն շղթան է, որ աշխատանքային առօրյայի ընթացքում ձեւավորվում է նորաստեղծ ավանում: Գալշոյանն ամբողջությամբ է դիտում ներկայացվող կյանքի պատկերը. նրա նպատակը չէ ծանրության կենտրոն դարձնել մեկ դեպք կամ մեկ անձնավորության: Նրան հետաքրքրում են բոլոր այն իրադարձությունները, որոնք կատարվում են գյուղում, եւ բոլոր այն մարդիկ, որոնք մասնակցում են դրանց: ➥ *էջ 4*



Երգի ուժը

Երեւանի Պ. Յավորովի անվան հանրակրթական հիմնական դպրոցի երկարամյա, երախտաշատ տնօրեն Գրիգոր Սաֆարյանը կրթօջախի նորաստեղծ թանգարանում մեծահամբավ աստղագետ (նաեւ՝ գրող, գեղանկարիչ) Գրիգոր Գուրզադյանին նվիրված ուշագրավ բաժին է ստեղծում:

Շուտով նա Գառնիի «Գալակտիկա» հատուկ կոնստրուկտորական բյուրոյում այցելում է անվանի գիտնական-տնօրենին եւ հրավիրում նրան՝ մասնակցելու թանգարանի հանդիսավոր բացմանը: Ակադեմիկոսը, իհարկե, իր խորին երախտագիտությունն է հայտնում, սակայն կտրուկ մերժում է հրավերը՝ փաստելով գերզբաղվածությունը:

— Լա՛վ,— բազմանշանակ ասում է Գր. Սաֆարյանը,— մեծահա՛րգ պարոն Գուրզադյան, իսկ կարելի՞ է հրաժեշտից առաջ Ձեզ համար երգել:

Եվ «Սայաթ-Նովա» գուսանական համույթի ճանաչված մենեղգիչն իր անզուգական ձայնով եւ մեծ ներշնչանքով կատարում է Պաղտասար Դպիրի «Ի ննջմանեդ արքայական» միջնադարյան հոգեզմայլ տաղը:

Գիտնականը, ձեռքը՝ ճակատին, մատնեը՝ ալեխառն մազերի մեջ, խոհուն աչքերը՝ կիսագոց, համակ ուշադրությամբ վայելում է երգը, ապա ոտքի ելնում, զգացված սեղմում երգչի ձեռքը եւ ասում.

— Երգդ զորավո՛ր էր… Երգը հաղթե՛ց ինձ… Գալի՛ս եմ…

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեությունը բիոէթիկայի բնագավառում: Մարդու իրավունքներն ու արժանապատվությունը՝ բիոէթիկական հիմնահարց

2002-ից բիոէթիկան դասվեց UNESCO-ի առանցքային գերակայությունների ցանկում:

Իր աշխատանքների շրջանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ն հենվում է խորհրդատվական երեք մարմինների գործունեության վրա: Դրանք են՝ Բիոէթիկայի միջազգային հանձնաժողով (International Bioethics Committee (IBC), Международный комитет по биоэтике (МКБ)), Բիոէթիկայի միջպետական հանձնաժողով (Intergovernmental Bioethics Committee (IGBC), Межправительственный комитет по биоэтике (МПКБ)) եւ Գիտական գիտելիքների եւ տեխնոլոգիաների էթիկայի համաշխարհային հանձնաժողով (World Commission on the Ethics of Scientific Knowledge and Technology (COMEST), Всемирная комиссия по этике научных знаний и технологий (ВКЭНЗТ)):

Բիոէթիկայի գոյության առաջին 50 տարիներին ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնը (Հայֆա, վարիչ՝ Ամնոն Քարմի) եւ նրան ենթակա ազգային մասնաճյուղերի վարիչները (այդ թվում՝ հայաստանյան, վարիչ՝ Սուսաննա Դավթյան) քննարկում էին նրա ծագման, զարգացման հայեցակարգերը, մոտեցումները: Այդ հրաշալի, օգտաշատ գաղափարը կամաց-կամաց ձեւավորեց իր սկզբունքներն ու հայեցակարգերը եւ ունեցավ իր հետեւորդներն աշխարհի բոլոր մասերում:

Այսօր մենք երկրորդ փուլում ենք: Այժմ դեմ առ դեմ կանգնած ենք մեկ ուրիշ խնդրի առջեւ, խնդիր, որը, թվում է, ավելի կարեւոր, ավելի էական, դժվար լուծելի է, քան առաջին փուլի խնդիրները. ներարկել մարդկանց կյանքի եւ առօրյա վարքագծի մեջ բարոյական արժեքներ, ներշնչել մարդկանց ունենալ այդ բարոյական արժեքներն իրենց հոգում, սրտում, մտահորիզոնում…

Մեր այս նպատակները կամ խնդիրները կարող է եւ պետք է իրագործվեն տարբեր միջոցներով:

Կրթական ուղին ներառում է դասավանդման առավել արդյունավետ մեթոդների կիրառում, որը պետք է հնարավորություն տա մեզ թափանցելու պոտենցիալ սպառողների (ուսանողներ, առողջապահության աշխատակիցներ, հիվանդներ եւ, ընդհանրապես, հասարակության ամենալայն խավեր) գիտակցության, ուղեղի, մտքի եւ հոգու մեջ:

Այսօր միայն բանավոր դասախոսելը պետք է թերի համարել, քանի որ շատ ավելի արդյունավետ է բիոէթիկական հիմնահարցերը տեղ հասցնել տարբեր «դերային խաղերի», իրադարձության վերլուծությունների (case study), էքսպերտ խմբերի, բանավեճերի, համապատասխան ֆիլմերի եւ ներկայացումների դիտումով ու քննարկումով: Մի հանգամանք, որ տողերիս հեղինակը, յուրացնելով Մոսկվայի ուսուցիչների փորձը, կիրառել է իր մանկավարժական գործունեության առաջին իսկ տարիներից եւ որոնց մասին ոչ միայն զեկուցում է կարդացել ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային գիտաժողովներում, այլեւ որպես նախագահող՝ վարել դասավանդման մեթոդիկային նվիրված գիտական նստաշրջան (*Davtyan S. Using Literature and Theatre for Education of Issues of Involuntary Abortion, Sterilization and Hospitalization //International Conference:*

Bioethics Education: Contents, Methods, Trends. Zefat, Israel, 2010, p. 34, Session19 Teaching Methodology Chair: S. Davtyan, p. 9):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնը (Հայֆա) եւ նրան ենթակա ազգային մասնաճյուղերը (այդ թվում՝ հայկականը) իրավասու են եւ պարտավոր՝ տարածելու հռչակագրի սկզբունքներն իրենց երկրներում:

Առաջին քայլն արված է. ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի հայաստանյան մասնաճյուղի ջանքերով եւ ԵՊԲՀ-ի աջակցությամբ հրատարակվել են հետեւյալ աշխատանքները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Բիոէթիկայի եւ մարդու իրավունքների մասին» հռչակագրում՝ ընդունված 2005 թ. հոկտեմբերին, նշվում է. «Բիոէթիկայի պատմության մեջ առաջին անգամ ՄԱԿ-ի անդամ պետությունները եւ միջազգային հանրությունը պարտավորվեցին մեկ միասնական համատեքստում հարգել եւ իրագործել փաստաթղթում հռչակած բիոէթիկայի հիմնական սկզբունքները»: Հռչակագիրը վերաբերում է բժշկության, կյանքի մասին գիտությունների եւ դրանց առնչվող տեխնոլոգիաների բարոյագիտական հարցերին՝ առաջնորդվելով այն սկզբունքներով, որոնք ապահովում են մարդու արժանապատվության եւ ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք: Հռչակագիրը դրանով իսկ հաստատում է մարդու իրավունքների եւ էթիկական նորմերի փոխադարձ կապն ու փոխազդեցությունը:

2008 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտության եւ տեխնոլոգիաների էթիկայի բաժանմունքը (վարիչ՝ Հենկ Տեն Հավե) մշակեց եւ ներկայացրեց «Բիոէթիկայի դասավանդման բազային ուսումնական ծրագիր»:

2010 թ. նոյեմբերի 23-ին համաձայնագիր (մեմորանդում) կնքվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Դենդեւ Բադարչ) եւ ԵՊԲՀ-ի (Սուսաննա Դավթյան) միջեւ:

Մինչ ԵՊԲՀ-ի հետ համաձայնագիր կնքելը ՅՈՒՆԵՍԿՕ-ն հետխորհրդային տարածքում համաձայնագիր էր կնքել Մոսկվայի, Կազանի եւ Մինսկի համալսարանների հետ՝ ըստ այն փաստի, որ այստեղ աշխատում են ազգային լեզվով դասագրքեր հրատարակած բարձր վարկանիշ ունեցող փորձագետներ Բ. Յուդինը, Ն. Աբրոսիմովան, Տ. Միշատկինան, որոնք պետք է իրականացնեն հիշյալ ծրագրի փորձարկումը:

Այսպիսով՝ հպարտությամբ եւ գոհունակությամբ կարելի է նշել, որ հետխորհրդային տարածքում Ռուսաստանից ու Բելառուսից հետո հաջորդ համաձայնագիրը կնքվեց Հայաստանում՝ Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ:

Լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի հայաստանյան մասնաճյուղի վարիչ եւ կնքելով համաձայնագիր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ՝ պարտավորված էինք ներկայացնել սույն հոդվածը, որում ամփոփված են հռչակագրի սկզբունքներին, դրանց ուսումնասիրման նպատակներին վերաբերող դատողություններ:

Սույն հոդվածը հռչակագրի նպատակների իրագործման միջոցներից մեկն է, որն առաջարկում է մարդկանց օգտվել գիտության ու տեխնիկայի նվաճումներից միայն այն դեպքում, երբ հարգվում են մարդու արժանապատվությունն ու իրավունքները:

Եվ այսպես՝ մարդու արժանապատվության եւ իրավունքների մասին խոսելիս նկատի է առնվում երկու հանգամանք (*Կենսաբժշկության բարոյահրավական հիմնախնդիրները, Հանրապետական գիտական կոնֆերանսի նյութերի ժողովածու, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Երեւանի պետական բժշկական համալսարան, Երեւան, 2017, էջ 29–37*). մարդն ունի իր նկատմամբ հարգալից վերաբերմունքի, աշխատելու, սովորելու եւ այլ իրավունքներ, եւ այդ շարքում առաջնային՝ հիմնարար իրավունքը նրա ապրելու իրավունքն է: Մարդու կյանքը սրբագործված է՝ նվիրական, անձեռնմխելի, որն ամրագրված է նաեւ շատ երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի Սահմանադրության մեջ, եւ այս դրույթի անտեսումը դիտվում է որպես մարդու իրավունքի ոտնահարում:

Մարդու կյանքի հետ գործ ունեցող մասնագետի՝ բժշկի՝ չխախտելու մարդու, տվյալ դեպքում՝ հիվանդի կյանքի սրբագործված, անձեռնմխելի լինելու իրավունքը: Այսինքն՝ իրավունք ունի՞ արդյոք բժիշկը խախտելու մարդու կյանքի իրավունքը, նրա կյանքի անձեռնմխելիությունը՝ թեկուզ հենվելով հիվանդի գրավոր կամ բանավոր արտահայտած ցանկության՝ համաձայնության վրա:

Ընդ որում՝ մարդու կյանքի իրավունքի ոտնահարումը եւս պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝

ա) մարդու կյանքի իրավունքի խախտում կամ ոտնահարում առանց նրա կամքի դրսեւորման (հիշենք Քրիստիան Բեռնարի արտասովոր դեպքը 1967-ին. ունե՞ր բժիշկն իրավունք՝ ոտնահարելու վթարի ենթարկված կնոջ կյանքի իրավունքը),

բ) կյանքի իրավունքի խախտում տվյալ հիվանդի գրավոր կամ բանավոր արտահայտած ցանկությամբ (հիշենք Գեւորգ Գեւորգյանի գործունեությունը): ➥ էջ 8

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

➥ էջ 3

Վեպի կառուցվածքը հատկանշվում է մի կողմից իրական տարբեր վիճակների կտրուկ անցումներով ու համադրությամբ, մյուս կողմից՝ ժամանակային տարբեր հատվածների հերթագայությամբ ու միահյուսմամբ: Հերոսներին նա ներկայացնում է թե՛ ներկա որեւէ վիճակում ու գործողության մեջ եւ թե՛ անցյալի ոգեկոչումով՝ արդեն ապրած տարիների հիշողությամբ: Ժամանակային տարբեր բեւեռներում հերոսներին ներկայացնելիս հեղինակը կարեւորում է ներքին խոսքը, մի հնար, որ ընդհանրապես նկատելի տեղ ունի Գալշոյանի բանարվեստում:

Հիմա, ի՞նչ բնավորություններ են վեպի հերոսները, ամբողջությամբ ի՞նչ առանձնահատուկ գծերով են բնութագրվում նրանք:

Բագրատի կերպարում կիզակետված է վեպի հիմնական ոգին՝ աշխատանքը: Անմշակ որձաքար հիշեցնող բնական նկարագրի տեր մարդ է նա, որ իր կյանքի նպատակը տեսնում է ուժերի լրիվ ծախսումով, հակառակ դեպքում օրը նրա համար թվում է կիսատ ու չապրած: Սանթրոն ու պառավ Զանանը Ձորի Միրոյի եւ նրա սերնդի մարդկանց երկվորյակներն են: Սրանք ամեն առիթով ոգեկոչում են իրենց անցյալը, այդ անցյալից անընդհատ պեղում նոր պատկերներ, անցքեր, իրադարձություններ եւ այդ ամենով իմաստավորում իրենց ներկան: Հարուստ բնավորություն է Արման, որն օժտված է սկզբունքային, ազնիվ գծերով: Արմայի կերպարին զուգընթաց՝ հեղինակը կերտում է նաեւ Արմայի զոհված հոր կերպարը: Արմայի հայրը դարձյալ անցյալի ձայնն է, որ ապրում է որդու մեջ եւ նրան հաղորդում կյանքի դասերը:

Վեպը համադրվում է նշված եւ չնշված բոլոր հերոսների անմիջական գործողություններով, հարաբերություններով, վերհուշերով: Աշխատանքային առօրյան, որով իմաստավորվում է հերոսների կյանքը, դառնում է մարդկանց միավորող հիմնական ուժը եւ կյանքի գեղեցկությունը:

Գալշոյանն իր վիպակներում ու պատմվածքներում միշտ էլ հավատարիմ է մնում իր նյութի ներքին տրամաբանությանը: Դա զգալի է եւ հերոսների ընտրության ու կերպավորման, եւ պատմվող նյութին բնորոշ միջավայր ստեղծելու հարցերում: Այդ միջավայրի հերոսների կերպավորման գործում կարեւոր նշանակություն ունեն թե՛ լեզվաոճական համապատասխան միջոցների օգտագործումը, թե՛ նյութի պատումի եղանակը, թե՛ հերոսների ներքինն ու արտաքինը բացահայտելու սկզբունքները, որոնք նա միշտ բխեցնում է նյութի ոգուց: Նաեւ դա է պատճառը, որ նրա հերոսները ներկայանում են իրենց բնական-կենսական նկարագրով եւ նախատիպային հավաստիությամբ:

Գալշոյանն ստեղծում է մեր կյանքին բնորոշ իրական ու բնական պատկերներ եւ անցյալի ու ներկայի օրգանական միահյուսմամբ ներկայացնում գյուղաշխարհի մարդկանց մի պատկերաշար, որոնք իրենց մեջ կրում են իրականության պատմական, հասարակական եւ բարոյական տեղաշարժերի դրոշմը, այլ կերպ՝ Երկրի ձայնը, դեմքն ու դիմագիծը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Կրկին չարչրկված «Սարի աղջիկ» երգի մասին, կամ երբ թուրքերեն բնագիրը ջախջախում է ադրբեջանական հորինվածքը

Հայկական ժողովրդական «Սարի աղջիկ» (թուրքերեն եւ ադրբեջաներեն՝ «Սարը գելին» («Շեկ նորահարս», «Շեկլիկ աղջիկ»)) երգը տարածված է ոչ միայն հայերի, թուրքերի եւ ադրբեջանցիների մեջ, այլեւ որպես հայկական ժողովրդական երգ՝ թարգմանված, փոխադրված կամ բնօրինակով երգում են պարսիկները, քրդերն ու արաբները:

Ակամա հարց է առաջանում. ի՞նչն է պատճառը, որ ադրբեջանցիներն այդքան մոլեռանդորեն երգն իրենցն են համարում: Հարցի պատասխանը որքան բարդ, այնքան էլ պարզ ու միանշանակ է. հայկական որեւէ բան կա՞, որի հանդեպ նրանք իրենցը համարելու մոլություն չունենան:

Շատ երաժշտագետներ են բազմիցս խոսել երգի մեղեդու անվիճելիորեն հայկական լինելու, հայկական լադերով կառուցված լինելու մասին, հայերեն տարբերակի բառերի վանկերի ու մեղեդու ներդաշնակության բացառապես համապատասխանության մասին: Եվ այն կարծիքն են հայտնել, որ երգի թուրքերեն եւ ադրբեջաներեն տարբերակների հիմքում հայկական մեղեդի է:

Երգն Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում հայտնի է եղել դեռեւս 19-րդ դարում: Տարածված է եղել նաեւ Ջավախքում, քանի որ ջավախահայերը մեծ մասամբ էրզրումի նահանգից են ժամանակին գաղթել: Մեծ եղեռնից փրկված հայերի սերունդները այս երգը երգում են աշխարհի տարբեր երկրներում:

Երգի թուրքական տարբերակը երգում են ամենահայտնի թուրք երգիչները, նրանցից ոմանք՝ նաեւ հայերեն: Այդուհանդերձ, երգի ազգային պատկանելության շուրջ երկարատեւ եւ բուռն վեճեր են եղել հատկապես ադրբեջանցիների հետ, թեեւ նրա հայկականության մասին բարձրաձայնել են թուրք երգահան Շանար Յուրդաթափանը, երգչուհի Սեզեն Աքսուն, լրագրող Մուրադ Էրթաշը, դոկտոր Գյոքչեն Քարանֆիլը, անգամ նախկին արտգործնախարար եւ վարչապետ Ահմեդ Դավութօղլուն եւ թուրք անվանի այլ մտավորականներ: Հիշենք նաեւ, որ այս երգը պոլսահայ երջանկահիշատակ մտավորական Հրանտ Դինքի շատ սիրելի երգն էր, որ հայերեն հնչեց նրա հուղարկավորության ժամանակ:

Այս ամենով հանդերձ՝ կա անառարկելի մի ճշմարտություն, որ ասում է... թուրքական տարբերակի բնագիրը. այն ավելի քան խոսուն է եւ ավելի քան բացահայտում է ադրբեջանական վարկածի սնանկությունը:

Վերլուծելով թուրքական տարբերակը՝ առաջին իսկ հայացքից ակնհայտորեն նկատվում է, որ սա երգ է հայ աղջկան սիրահարված թուրք երիտասարդի մասին: Եվ երգի մեղեդին բնականաբար պետք է հայկական լիներ:

Erzurum çarşı pazar
Leylim aman, aman, (2)
Sarı gelin,
İçinde bir kız gezer,
Nenen ölsün,
Sarı gelin, aman, (3)
Suna yarim.

Էրզրումի շուկայում
Ախ, իմ Լեյլի, ամա՛ն, (2)
Շեկլիկ հարսիկ,
Մի աջիկ էր անց կենում,
Մերդ մեռնի,
Շեկլիկ հարսիկ, ամա՛ն, (3)
Սոնա յար իմ:

Ուշադրություն դարձնենք, որ իրադարձությունները տեղի են ունենում Էրզրումում՝ հայոց Կարինում, որի բնակչության բացարձակ մեծամասնությունը մինչեւ Մեծ եղեռնը հայեր էին: Ի դեպ, շուկան այն վայրն է, որտեղ կարող էին հանդիպել տարբեր ազգերի ու կրոնների ներկայացուցիչներ:

Ուշագրավ են նաեւ կրկներգի բառերից մի քանիսը: Նախ՝ աղջկա շեկ լինելն ավելի է ընդգծում հայ լինելու հանգամանքը, երկրորդը՝ «սոնա» բառը հայերենի բարբառներում (մասնավորապես՝ Վանի բարբառում) նշանակում է բարձրահասակ, վայելչագեղ, թուրքերենը փոխառել է այդ բառը «սունա» ձեւով: Հետաքրքիր է, որ «սոնա յար» բառակապակցությունը կարելի է հանդիպել հայկական ժողովրդական բազմաթիվ երգերում, ներառյալ՝ Կոմիտասի գրանցած հայտնի երգերում:

Elinde divit kalem,
Leylim aman, aman, (2)
Sarı gelin,
Dertlere derman yazar,
Nenen ölsün,
Sarı gelin, aman, (3)
Suna yarim.

Ձեռքին բռնել էր դալամ,
Ախ, իմ Լեյլի, ամա՛ն, (2)
Շեկլիկ հարսիկ,
Գրում էր դարդիս դարման,
Մերդ մեռնի,
Շեկլիկ հարսիկ, ամա՛ն, (3)
Սոնա յար իմ:

Ո՞ր ազգի աղջիկը 19-րդ դարում ձեռքին կարող էր գրիչ բռնած լինել, եթե ոչ ուսումնասեր եւ կրթված հայուհին:

Erzurumda bir kuş var,
Leylim aman, aman, (2)
Sarı gelin,
Kanadında gümüş var,
Nenen ölsün,
Sarı gelin, aman, (3)
Suna yarim.

Էրզրումում մի թռչնակ,
Ախ, իմ Լեյլի, ամա՛ն, (2)
Շեկլիկ հարսիկ,
Թեւերին ուներ արծաթ,
Մերդ մեռնի,
Շեկլիկ հարսիկ, ամա՛ն, (3)
Սոնա յար իմ:

Այստեղ էլ ակնհայտ է, որ խոսքը, իրոք, Կարնո տարազի անբաժան մասը կազմող արծաթյա զարդերի մասին է:

Yarim gitti gelmedi,
Leylim, aman, aman, (2)
Sarı gelin,
Elbet bunda bir iş var,
Nenen ölsün,
Sarı gelin, aman, (3)
Suna yarim.

Յարս գնաց ու չեկավ,
Ախ, իմ Լեյլի, ամա՛ն, (2)
Շեկլիկ հարսիկ,
Հաստատ ուներ մի պատճառ,
Մերդ մեռնի,
Շեկլիկ հարսիկ, ամա՛ն, (3)
Սոնա յար իմ:

Եվ ի՞նչ խանգարող հանգամանք կարող էր լինել նրանց հանդիպման համար: Ի՞նչ պատճառ կարող էր լինել, եթե ոչ առաջին հերթին հենց տարբեր կրոնների պատկանելու հանգամանքը:

Նշենք նաեւ, որ հայկական տարբերակները՝ եւ արեւելահայ, եւ արեւմտահայ, կրկին անպատասխան սիրո մասին են, թեեւ բովանդակությամբ տարբերվում են թուրքական տարբերակից:

Արեւելահայ տարբերակ՝

Վարդ սիրեցի, փուշ դառավ,
Լե-լե յամա՛ն, (3)
Գնաց ուրիշին առավ,
Ախ, մերդ մեռնի,
Սարի աղջիկ, օյ-օյ,
Քարի աղջիկ, օյ-օյ,
Քարսիրտ աղջիկ, օյ-օյ,
Քարսիրտ աղջիկ...

Արեւմտահայ տարբերակ՝

Ամպել ա փառա-փառա,
Լե-լե, ամա՛ն, ամա՛ն, (2)
Սարի աղջիկ,
Ես իմ սիրածին չառա,
Ախ, մերդ մեռնի,
Սարի աղջիկ, ամա՛ն, (3)
Քարսիրտ աղջիկ...

Ադրբեջանական տարբերակի տեքստը, որը բացարձակապես կապ չունի ո՛չ հայկական, ո՛չ էլ թուրքական տարբերակների հետ, քննելու կարիք անգամ չկա:

Այսպիսով՝ երգի թուրքական տարբերակի բնագիրն ակնհայտորեն վկայում է, որ այն երգ է հայուհուն սիրահարված թուրքի մասին, ուստի՝ մեղեդին էլ հայկական ժողովրդական մեղեդուց պետք է փոխառված լիներ:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՊԻՂԱՏՈՍԸ

⬅ էջ 2

Դուք ինձ ասում եք, որ այդ մարդը վտանգ է ներկայացնում, դա ինձ համար բավական է: Եթե դուք ինձ բերեք ձայների մեծամասնությունը, գործը կնքված է. ես այլեւս դրան չեմ վերադառնա: Հիսուսին կուղարկենք խաչվելու...»:

Սա բնավ չի համապատասխանում այն պատկերին, որ մենք ստեղծում ենք հռոմեական կառավարչի մասին: Իսկ մեր պատկերացումը ճի՞շտ է արդյոք: Հռոմեացու համար ոչ հռոմեացին զուգակցվում էր ստրուկի հետ ու անասունից ավելի բարձր չէր դասվում: Ապշում ես, երբ Գործք-ում կարդում ես վերաբերմունքի այն տարբերության մասին, որ իշխանությունները դրսեւորում են Պողոսի հանդեպ, նրա՝ հռոմեական քաղաքացիական կացությունն իմանալուց առաջ եւ հետո: Փիլիպեի մեջ զորագլուխները գալիս են ներում հայցելու, որ առանց դատավարության՝ դագանակներով ծեծել էին հռոմեացի մի քաղաքացու (Գործք Ջ 35–40): Երուսաղեմում հազարապետը «վախեցավ, քանզի նրան կապանքի տակ էր առել» (ԻԲ 29): Եթե Պողոսն այդ ծագումը չունենար, նման վարմունքը պիտի համարվեր բնական ու օրինական:

Պիղատոսին խղճի խայթերն ընդհանրապես չեն տանջում: Ղուկասը միակ ավետարանիչն է, որը մեզ տեղեկացնում է Պիղատոսի մի արարքի մասին, որ Հիսուսի դատավարությունից առաջ էր եղել. «Պիղատոսը գալիլիացիների արյունը խառնեց իրենց զոհերի արյանը»: Ի՞նչ են նշանակում այս բառերը: Մարդիկ սպանվեցին, եւ դա կատարվեց կուսակալի հրամանով: Հիսուսը լուրն ստանում է Գալիլիայում: Քանի որ զոհերը գալիլիացիներ էին, ուրեմն սպանությունը պետք է եղած լիներ երկրից դուրս: Արդ, Պիղատոսը, որը նստում էր Կեսարիայում, մեծ տոների ժամանակ գալիս էր Երուսաղեմ կարգ ու կանոն հաստատելու, երբ ուխտագնացները գնում էին Տաճար զոհեր մատուցելու: Հետեւաբար պետք է կարծել, որ Պիղատոսի զինվորները Տաճարում շրջապատել են մարդկանց պաշտամունքի ժամանակ ու կոտորել նրանց: Ռազմական ներխուժումն այդ սրբազան պատերից ներս խիստ վիրավորական արարք պիտի լիներ Պիղատոսի կողմից: Պրոֆ. Կալլմանն առաջարկել է այդ փաստի մի նոր մեկնաբանություն: Ըստ նրա՝ «զոհաբերությունները» կենդանիների զոհաբերություններ չէին, որ նվիրաբերվում էին Տաճարին, այլ՝ զելոտ (նախանձահույզ) գալիլիացիների կողմից խռովության ընթացքում սպանված մարդիկ: Երեւի Պիղատոսը ծայրահեղ խստությամբ ճնշել էր քայքայիչ ուժերին: Տեսարանը ներկայացնում են Հիսուսին, քանզի գիտեն, որ նա հետաքրքրվում է զելոտների շարժմամբ: Բայց այդ օրինակին

Հիսուսն ավելացնում է մեկ ուրիշը, երբ մարդիկ սպանվում են բռնի մահով. տասնութ զոհ, որոնց Սելոամի աշտարակը տակով էր արել Երուսաղեմում, եւ գուցե Պիղատոսի կողմից կարգադրված աշխատանքների ժամանակ, նրանք մեռան անմեղ մահով՝ հանկարծակի ու առանց արտաքին մի պատճառի: Այդ երկու օրինակներից Հիսուս հետեւյալ խորհուրդն է տալիս. մահը միշտ վարձքն է մեղքի: Եվ մարդկային ցեղի մեղավորությունը բավական է օրինականացնելու այն մահը, որը կարող է պատահական թվալ: Ճզմվածների համար դա անմեղ մահ էր: Որտեղից էլ եզրակացնում եմ՝անմեղ մահ էր նաեւ գալիլիացիների համար: Ակնհայտ է, որ նրանց զոհերը Աստծուն զոհաբերված կենդանիներ էին եղել Տաճարում, եւ որ բռնի կերպով, անարդարացի՝ իր մակերեսային պատճառաբանությամբ, Պիղատոսն արյան մեջ է խեղդել ուխտագնացների մի ողջ խմբի:

Լուրը համապատասխանում է այն մանրամասներին, որ աշխարհիկ (Հովսեփոս Փլավիոս) պատմությունը տալիս է մեզ այն տասը տարիների մասին, որ անցկացրել էր Պիղատոսը Պաղեստինում: Հրաժարվելով իր նախորդների շրջահայացությունից՝ Պիղատոսն իր զորախմբերը, որ ցուցանակներ էին տանում կայսեր պատկերով, մտցրեց Երուսաղեմ: Դա նշանակում էր լրջորեն հակադրվել հրեաներին, որոնց համար մարդու յուրաքանչյուր պատկեր հանցագործություն էր Աստծու հանդեպ: Պիղատոսը ստիպված եղավ տեղի տալ խաղաղ շրջափակման առաջ, երբ յոթ հազար հրեա հավաքվել էր Կեսարիայի իր պալատի առջեւ: Այսպես կոչված՝ «Կորբանի» գործում Պիղատոսն օգտագործեց այն դրամագլուխը, որը նախատեսված էր Տաճարի սուրբ կարիքների համար: ➥ էջ 6

Վատոնի մետրոպոլիտ ՍՈՒՐՈԺՍԿԻ

Վերնորյա մտորում

Ամանորը դիմավորելիս մենք մեկս մյուսիս ողջյունում ենք՝ ասելով. «Նոր տարին թող նոր երջանկություն բերի ձեզ»: Եվ հաճախ, երբ մենք մտածում ենք երջանկության մասին, նկատի ունենք լոկ նյութական բարեկեցությունը, ընտանիքում ու բարեկամների հարաբերություններում ջերմությունն ու խաղաղությունը՝ մոռանալով, որ երջանկությունը երբեմն լինում է պարտադրող ու խիստ: Ռուս մի բանաստեղծ այսպես է այն ձեւակերպել.

Ի՞նչ է երջանկությունը... Կյանքի ճանապարհին,
Ուր էլ հարկ է, թե գնաս՝
Թշնամիներ չտեսնես ու արգելքներ չունենաս.
Սիրիր, հուսա, հավատա (Ա. Մայկով):

Եվ եթե մենք այսպես մտածենք երջանկության մասին, ինչը ցանկանում ենք մեզ եւ ուրիշներին, ապա կտեսնենք, որ առաջինը, ինչ մեզանից պահանջվում է, սերն է: Սակայն սերը եւ ցնծալից ուրախություն է, եւ որոշակի հերոսություն: Որպես ցնծալից ուրախություն՝ դա այն է, երբ սիրելիիդ տալիս ու նրանից ստանում ես, ինչը չափազանց թանկ է, իսկ հերոսություն է, երբ դու պատրաստ ես սիրելիների եւ ոչ սիրելիների համար զոհաբերել կյանքդ: Երբ ես ասում եմ ոչ սիրելիներ, ի նկատի ունեմ նրանց, ում նկատմամբ չունենք բնատուր կապվածություն, սակայն նրանց այնպես սիրեց Աստված, որ Իր Միածին Որդուն զոհաբերեց, որպեսզի նրանք փրկվեն:

Խորհենք, թե ինչ է նշանակում սերը՝ որպես ցնծություն, եւ սերը՝ որպես խաչ, եւ մուտք գործենք նոր տարի՝ սիրելու եւ հուսալու, ամեն բանում հուսալու մտադրությամբ, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Սերը ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում է, սերը երբեք չի անհետանում» (Ա Կորնթ. ԺԳ 7): Ամեն բանի հանդեպ հույս է տածում: Հույս է տածում մարդու վերափոխման հանդեպ, այն մարդու, որը մեզ ատում է, հույս է տածում անգամ սեփական անձի վերափոխման հանդեպ: Հույս է տածում, որ Աստված մեզ ժամանակ կտա ուղղվելու եւ մեզ ատողին էլ՝ սթափվելու եւ նոր մարդ դառնալու՝ իր ստեղծողին եւ իր փրկչին նմանվելով: Եվ մենք այդ ժամ կարող ենք ասել՝ այո՛, մենք հավատում ենք, հավատում ենք Աստծո սիրուն, հավատում ենք յուրաքանչյուր մարդու անսահման հնարավորություններին, հավատում ենք, որ նույնիսկ մեր տկարություններով, մեր թերարժեքությամբ կարող ենք դառնալ Քրիստոսի աշակերտը:

Մենք մուտք ենք գործում նոր տարի: Հայացք նետելով անցնող տարվա՝ տեսնում ենք, թե որքան սարսափներ, որքան դառնություններ կային շատերի ու նաեւ մեր կյանքում: Եվ ահա մուտք գործելով այս նոր տարի՝ բերենք Աստծուն մեր անկեղծ, ի սրտե ապաշխարումը, ապաշխարումն առ այն, որ չկարողացանք Նրան արժանի աշակերտ լինել: Նա մեզ մահու չափ սիրեց, բայց պարզվեց, որ դա քիչ է մեր կյանքը փոխելու համար: Իսկ եթե նայենք, թե ինչ է եղել աշխարհում անցած վերջին տարիների, ավելին՝ երկու հազարամյակների ընթացքում, չափազանց ցավալի է: Խորհենք նրա մասին, որ 2 հազարամյակից ավելի պակաս ժամանակահատվածում որքան զինվորներ են դուրս եկել միմյանց դեմ՝ բոլորն էլ քրիստոնյա, էլ չենք խոսում այն մասին, թե որքան մարդկային արյուն է թափվել մեզ ոչ հավատակիցների կողմից: Սրա՞մ համար էր Աստված մեզ աշխարհ ուղարկել, այդպե՞ս է Նա մեզ պատվիրել, որ Բարի Լուրը տանենք աշխարհին: Մտածենք այն մասին, թե ինչ ենք արել Աստծո արարչագործության հետ, ինչպես ենք ապականել հողը, ինչպես ենք սրբապղծել, ինչպես ենք այլասերել մարդկային հարաբերությունները՝ թե անձնական եւ թե հասարակական մակարդակներում:



Հայացք նետելով անցնող տարվա՝ ցավ ի սիրտ մտածում եմ, թե ինչպես դարձա Քրիստոսի դավաճանը, թե ինչպես ձեզանից յուրաքանչյուրի եւ բոլորի, ուրիշ շատ օտար մարդկանց առջեւ դարձա դավաճան:

Խնդրում եմ՝ աղոթեք, որ Աստված ինձ ժամանակ տա սթափվելու, ողջ հոգով ապաշխարելու: Սա թող տեղի ունենա մեզանից յուրաքանչյուրի հետ, որպեսզի ամեն մեկս հնարավորություն ունենանք վեր հառնելու՝ մի կողմից անցյալի սարսափներից, մյուս կողմից՝ ցնծության, որպեսզի Աստծո կողմից այսքան սիրվածներիս համար էլ հեշտ լինի սիրելու, ծառայելու մեկս մյուսիս, ուշադիր լինելու միմյանց հանդեպ: Վերջապես մուտք գործենք այս նոր տարի՝ նպատակադրված դառնալու անկեղծ աշակերտը Քրիստոսի: Ամեն:

Քրիստոսի Ծնունդը

Ամեն տարի վերադառնում է ամենալուսավոր, ամենաուրախ մեր տոնը՝ Քրիստոսի ծննդյան տոնը: Եվ ամեն տարի մենք նոր ուժով ենք ապրում դրա բուն էությունը, որովհետեւ ամեն տարի այն հարստանում է նոր բովանդակությամբ եւ նոր ուրախությամբ:

Սուրբ Գիրքը մեզ ասում է, թե Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի աշխարհը փրկվի: Մարդկության ողջ պատմության փորձից գիտենք, որ սերը հասնում է իր լիությանը այն ժամանակ, երբ տեղի է ունենում այնպիսի մի բան, որ մարդը կարող է իր կյանքը, իր հոգին տալ հանուն սիրելիների: Որպեսզի Իր Միածին Որդուն տար հանուն ընկած մարդկանց փրկության, Աստված պիտի շատ խիստ ու խորը սիրեր մեզ՝ մարդուս՝ այն էլ ոչ միայն անցյալում, այլեւ ներկայում:

Ես հիշեցի, թե ինչպես պատերազմի ժամանակ մի սպա մահվան է ուղարկում սեփական որդուն, որպեսզի խնայի մյուս զինվորներին: Մեկը նրան հարցնում է. «Դու ինչպե՞ս կարողացար ուղարկել որդուդ եւ ոչ թե մեկ ուրիշի»: Եվ այդ սպան պատասխանում է. «Ես մարդ էի ուղարկում մահվան եւ ես կարող էի միայն իմ որդուն ուղարկել, իսկ ուրիշ մոր, ուրիշ հոր որդուն չէի կարող»: Այդ մարդն իսկապես, հաստատապես ապրել էր այն, ինչը կատարվել էր Քրիստոս Փրկչի մարդեղացումի հետ: Աստված մեզ այնպես սիրեց, որ միայն Նրա Որդին Իր մահով եւ Իր կյանքով կարող էր մեզ փրկել, ուրիշին ուղարկել չէր կարելի: Ուրեմն՝ ինչի՞ մասին է խոսում այդ սերը: Այն մասին, որ Աստված հավատում է մարդուն: Մենք եւս հավատում ենք Աստծուն, սակայն չենք հավատում մեր ողջ կյանքով, իսկ Աստված հավատում է մարդուն Իր Միածին Որդու ողջ կյանքով եւ ողբերգական ու տանջալից մահով: Նման սիրուն մենք ինչպե՞ս ենք պատասխանելու:

➥ էջ 7

ՄԱՐԿ ԿՈՒՀԼԵՐ

ՊԻՂԱՏՈՍԸ

➥ էջ 2, 5

Մտադրությունը հիանալի էր. բարելավել Երեուսաղեմին քաղցրահամ ջրով մատակարարումը: Բայց այդ գործելակերպը բողոքի ցույց հարուցեց: Պիղատոսը փորձեց դուրս պրծնել՝ ամբոխ ուղարկելով քաղաքացիական հագուստ հագած զինվորների: Իրենց մահակներով նրանք հարվածեցին ու ջարդեցին ցուցարարներին: Արդյունքը եղավ Հռոմ ուղարկված բողոքը ու կայսեր հանդիմանությունը՝ զորագնդի անօրինական ու անպատվաբեր օգտագործման համար: Մի տոնակատարության ընթացքում, որ տրվում էր Հերովդեսի պալատում, Պիղատոսը հրամայեց կրել վահաններ, որոնց վրա կայսեր պատկերը կար: Այս անգամ եւս բողոքի ցույցը Հռոմում հարուցեց Տիբերիոս կայսեր խիստ հանդիմանությունը: Ի՞նչ ասել այս ամենի մասին: Պիղատոսը կամավոր, սադրիչ, ավելի շատ զինվորական, քան դիվանագետ, ցույց տվեց հոգեբանության մասին իր լրիվ անտեղյակությունը: Նա բռի է ու ամբողջովին արհամարհանքով լցված դեպի նրանք, ում պետք է կառավարի: Նա առանց այլեւայլության ցույց է տալիս իր ուժը: Իր հպատակները, որոնց չի ձգտում հասկանալ, իրեն գրգռում են, ու ինքը բնավ չի խուսափում նրանց հետ կռվի մեջ մտնելուց: Իսկ միջոցների ընտրության մեջ նա խտրություն չի դնում:

Բայց եթե հարաբերությունները Կայափայի ու Պիղատոսի միջեւ լարված էին, ինչո՞ւ այդ դեպքում հանրահայտ գաղտնի տեսակցության ժամանակ կուսակալը հրեաների խաղը խաղաց ու համաձայնեց վերացնել կալանավորին՝ առանց երկար-բարակ մտածելու: Հավանաբար հաշվարկ կատարելով: Կա՛մ՝ Հիսուսն իսկապես այն էր, ինչ Կայափան էր ասում՝ զելոտ-խռովարար. այդժամ

կարելի էր օգտվել դրանից ու ընդհատակյա դիմադրության ցանցը զրկել նրա ղեկավարներից մեկից, կա՛մ էլ՝ Հիսուսը տարօրինակ գաղափարապաշտ էր ընդամենը՝ անվնաս երազող (ինչո՞ւ Պիղատոսի ոստիկանությունը նրան այդպես չպիտի նկարագրեր իր զեկուցումների մեջ): Հիսուսը դառնում էր փոխանակվող դրամ. ես մատուցում եմ ձեզ՝ նրան վերացնելու ծառայություն, իսկ դուք, որպես հատուցում, խոստանում եք ձեզ հանգիստ պահել... Պիղատոսը կարիք ուներ, որ հրեաները խաղաղվեին: Մի քիչ հանգստության համար արժեր զոհաբերել մեկ մարդու կյանքը:

Եվ, ահա, Պիղատոսը, ում առավոտ շուտ ստիպել էին վեր կենալ անկողնուց, վերադառնում է իր նախորդ օրվա որոշմանն ու պատռում պայմանագիրը, հրաժարվում իր խոստումից եւ լրջորեն, որպես փորձառու ու գիտակից դատավոր, քննում է դեպքը՝ կատաղությունից եփվող քահանաների առաջ:

Դարձյալ Հովհաննեսին ենք պարտական այդ տեղեկության համար: Իսկապես, առաջին երեք Ավետարանների պատմությունը՝ իր համառոտությամբ, տալիս է արագ կայացրած որոշման տպավորություն. հրեաները Հիսուսի հետ գալիս են կառավարչի մոտ, որը մեղադրյալին հարցնում է, թե արդյո՞ք նա հրեաների թագավորն է, ինչին Հիսուսը պատասխանում է. «Դո՛ւ ես ասում»: Դա է նրա միակ խոսքը, քանզի այնուհետ Հիսուսը համր մնաց գլխավոր քահանայապետերի մեղադրանքների առաջ: Պիղատոսը զարմացած է մնում դրանից, արձակում է Բարաբբային, ինչը պահանջում է մոլեռանդ ամբոխը, ու դատապարտում Հիսուսին մահվան՝ համոզված լինելով, որ նա անմեղ է: Այսպիսին է, ընդհանուր առմամբ, դեպքերի զարգացումը:

Կարո՞ղ ենք այստեղ խոսել մանրազնին մի հետաքննության, անկողմնակալ հարցաքննության մասին: Քահանաներն այնտեղ են, հետո էլ ամբոխը. գոռում են, բղավում, իրենց զայրույթն են արտահայտում ծայրահեղ լարված մթնոլորտում: Ինչպե՞ս կարող է դատավորն իր աշխատանքն անել լրջորեն՝ կատաղած ամբոխի հարայ-հրոցի մեջ, որը ճնշում է գործադրում նրա վրա:

Բայց Հովհաննեսը ճշգրտում է, որ դեպքերը զարգացան ավելի բարդ ձեւով: Հիսուսին տարան պալատի ներսը: Հրեաները մնացին շենքից դուրս, քանզի չէին ուզում ենթարկվել ծիսական պղծության այդ հեթանոսի մոտ, նրա, ով իրենց պիտի խանգարեր հետեւելու Զատկի արարողությանը: Հետաքրքիր աստվածվախություն է, երբ քամելով խմիչքը՝ կուլ չտալու համար դրա միջի ճանճը, կուլ են տալիս ուղտ, ըստ Հիսուսի՝ փարիսեցիների մասին դիպուկ արտահայտության: Բայց եթե այդ մանրամասնը ցույց է տալիս դավադիրների երկերեսանիությունը, ապա այն թույլ է տալիս Հովհաննեսին՝ ընդգծելու նաեւ այն քննության լրջությունը, որն անում է Պիղատոսը. հրեաները դրսում են, Հիսուսը՝ ներսում: Արդ, Պիղատոսը խոսեց Հիսուսի հետ՝ նրան մեղադրողներից հեռու, գրեթե դատարկ սրահի լռության մեջ: Պիղատոսը Հիսուսի հետ ունեցել է դեմ առ դեմ հանդիպում եւ իր գրեթե մտերմիկ խոսակցություններն օգտագործել է Հիսուսի մասին ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Շարունակելի

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

Երուսաղեմի պատմական նշանակությունը հայերի համար՝ ըստ Ռաֆֆու հրապարակախոսական եւ գրական-քննադատական հոդվածների

Ինչպես գիտենք, հայ մեծանուն գրող Ռաֆֆին հայտնի է ոչ միայն իր գրական-գեղարվեստական գործերով, այլ նաեւ հրապարակախոսական, գրական-քննադատական հոդվածներով: Դրանցից մեկում հեղինակն անդրադարձել է Երուսաղեմի վանքին՝ փորձելով հասկանալ, թե ինչ դերակատարում ունի այն հայ ազգի համար: Հեղինակի մտորումներն ու քննադատությունները ներկայացնում ենք ստորեւ:

Հրեա ազգն իր հայրենիքը ճանաչում էր Երուսաղեմի մեջ, այսինքն՝ այն տաճարի մեջ, որ Եհովայի տուն էր կոչվում: Դա էր ժողովրդի սրբավայրը, դա էր, որ Իսրայելի որդիներին շաղկապում էր «ուխտյալ» երկրի հետ: Երբ Հիսուս Քրիստոսի աշակերտները հիացմամբ իրենց վարդապետին ցույց են տվել տաճարի շքեղությունը, նա խիստ սառնասրտությամբ պատասխանել է. «Կգան օրեր, որ մի քար էլ քարի վրա չի մնա, եւ բոլորը կքանդվի»:

Մարգարեությունն իրականացավ. տաճարը քանդվեց, եւ նրա հետ կտրվեց այն կապը, որ կապում էր Իսրայելի որդիներին «մեղր ու կաթ բխող ուխտյալ» երկրի հետ: Նրանք սկսեցին գաղթել դեպի զանազան երկրներ. նրանք այլեւս հայրենիք չունեին: Մի ամբողջ ազգ քայքայվեց նյութեղեն տաճարի հետ...

Քրիստոնեությունը հիմնեց հին տաճարի ավերակների վրա նորը: Քրիստոնեությունը, որի առաքելությունը կենդանի մարդկանցից Աստծո տաճարներ պատրաստելն էր, խոտորվելով իր ուղղությունից, սրբացրեց այն բոլոր նվիրական վայրերը, ուր կատարվել էին Փրկչի այս կամ այն տնօրինությունները: Դավթի քաղաքի հողն անգամ նվիրական դարձավ քրիստոնյա աշխարհի համար, երկար ժամանակ նավերով հող էին կրում դեպի արեւմուտք՝ իրենց գերեզմանատները նրանով սրբացնելու համար: Այդպիսի սնահավատություններից ծնվեցին «խաչակիրների» արշավանքները. քրիստոնյա աշխարհն սկսեց կռվել Արեւելքի հետ՝ սուրբ տեղերի ազատագրման համար, եւ 84 տարի շարունակ Փոքր Ասիան ներկվեց մարդկային արյունով:

Ըստ Ռաֆֆու՝ հայերը եւս հետ չմնացին ժամանակի իրադարձություններից: Նրանք եւս այնտեղ հիմնեցին վանքեր, հաստատեցին վանական միաբանություն; Այնուհետեւ մեր թագավորներից, թագուհիներից, իշխաններից եւ հարուստներից շատերը, երբ իրենց հայրենիքին վտանգ էր սպառնում, երբ թշնամուն դեմ գնալ չէին կարողանում, թողնում էին ժողովրդին բարբարոսների ձեռքում եւ իրենց գանձերն առնելով՝ դիմում էին դեպի Երուսաղեմ՝ այնտեղ սրբերի հետ ապրելու եւ իրենց հոգու փրկության համար աղոթելու: Մեր անդրանիկ քրիստոնյա Աբգարի կինը՝ Հեղինե թագուհին, առաջինը եղավ, որ ճանապարհ բացեց դեպի սուրբ քաղաք:

Հեղինակի խոսքով՝ հայոց ուխտավորները, որպես նշան ուխտագնացության, դրոշմում էին իրենց ձեռքերը, բազուկները վանքի կնիքով, որի կապտագույն տպավորությունը մնում էր անջնջելի: Նրանք ստանում էին մի նոր՝ սրբազան մականուն՝ կոչվում էին «մուղդուսի» (մահտեսի, արաբ. *մուղդադաս* բառից, նշանակում է սուրբ, մաքրված): Նրանք վանքի պատրիարքից ստանում էին օրհնության կոնդակներ, որոնց մեջ նշված էր լինում, թե որքան գումար ընծայեց վանքին «մուղդուսին» իր հոգու փրկության համար:

Բացի նախապաշարմունքը, բացի ժողովրդի մեջ սովորական դարձած սնահավատությունը, ուխտավորներին հրապուրում էր այնտեղ եւ մի հրաշք, որ կատարվում էր յուրաքանչյուր տարի Հարության օրը: Պատարագի ժամանակ հանկարծ երկնքից լույս էր իջնում, եւ տաճարի բոլոր մոմերն առանց կրակի վառվում էին, եւ դա կարող էր տեսնել ամեն մի «մուղդուսի», եթե հավատք ուներ:

Եվ հետաքրքրական է, որ այն հարուստները, որոնք Երուսաղեմ չէին գնացել, համարվում էին ժլատ, ագահ եւ սատանայից կախված: Մինչդեռ «մուղդուսիների» դրոշմված աջը համբուրում էին քահանաների օծյալ աջին հավասար:

Նույն հոդվածում Ռաֆֆին ներկայացնում է մի հատված իր եւ եվրոպացի վաճառականի զրույցից, որտեղ վերջինս նշում է, որ ուխտավորներն ամեն տարի տանում են երկրի հարստությունը Մեքքա, Մեդինա, Բաղդադ, այնտեղ ծախսում, փոխարենը բերում «հաջի», «քյալբալայի» անունները միայն: Ըստ նրա՝ «դա տնտեսական մի մեծ հալածանք է, որոնք ամեն տարի միլիոններ են կլանում»:

Եվրոպացու քննադատությունները տեղին է համարում հրապարակախոսը՝ ընդգծելով, որ հայերի համար էլ մեծ տնտեսական վնասներ են բերում ուխտագնացությունները Երուսաղեմ, որ լայն տարածում էին ստացել իր օրերում: Այնուհետեւ շարունակում է մտորումներն ավելի փաստացի:

Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքի օրերին հույն կղերը, կաշառելով սուլթանի բոյինի-էյրի (ծռվիզ) Մուհամմադ փաշա անունով վեզիրին, խլեց հայ աբեղաների ձեռքից Երուսաղեմի ուխտատեղիները, այդ թվում՝ սուրբ Հակոբա վանքը: Աստվածատուր պատրիարքն ստիպված էր գնալ Կ. Պոլիս՝ դիմելու ազգի օգնությանը, որ օգնեն դրամով, գործով օժանդակեն իրեն, որպեսզի ինքը եւս, հույների նման կաշառքներ տալով, կարողանա հետ խլել նրանցից հայոց սրբավայրերը: Նա դեգերել է հայոց իշխանների, հարուստների եւ եկեղեցիների դռներում եւ հանգանակություն հավաքել: Այդ ընթացքում նա այնթափցի Եղիազար վարդապետին Կ. Պոլսից ուղարկել է Երուսաղեմ՝ որպես իր փոխանորդ: Եղիազարը, գնալով Երուսաղեմ, վանքը գտել է սաստիկ աղքատության մեջ: Նա քրքրել է պատրիարքի թղթերը եւ գտել մի գրություն. «Ըսպիտակ մոմ՝ այսքան, դեղին մոմ՝ այսքան»: Նա իսկույն հասկացել է այդ հաշվի գաղտնիքը եւ սկսել է որոնել «մոմերը»: Եվ պատրիարքի կացարանի մեջ գտել է երկու պղնձե կարաս, մեկի մեջ լցված «դեղին մոմի» փոխարեն դեղին ոսկի, իսկ մյուսի մեջ՝ «սպիտակ մոմի փոխարեն» սպիտակ

արծաթ, ընդհանուր՝ երկու հարյուր հազար դահեկանի արժեք ունեցող:

Երուսաղեմի պատրիարքության հիմքը դրվել է 1311 թվականին՝ Սարգիս եպիսկոպոսի կողմից, Կիլիկիայի կրոնական երկպառակությունների ժամանակ: Նա, ապստամբելով Ռուբինյան Օշին թագավորի եւ Սսի Կոստանդին կաթողիկոսի դեմ եւ եգիպտոսի մահմեդական ամիրից հրովարտակ առնելով, սկսել է թագավորից եւ կաթողիկոսից անկախ իշխել Երուսաղեմում: Եվ այդ օրվանից սկսվել եւ շարունակվել է պայքար Երուսաղեմի եւ Կ. Պոլսի պատրիարքությունների միջեւ մի կողմից, Երուսաղեմի եւ մյուս կաթողիկոսարանների միջեւ՝ մյուս կողմից: Այդ կռիվները դարերով տակնուվրա են արել ազգը, պառակտել, պատճառել բարոյական եւ նյութական ահռելի վնասներ՝ ժողովրդին զբաղեցնելով անհաշտ երկպառակություններով:

Այնուհետեւ հեղինակը հիշում եւ մեջբերում է մի դեպք, որ պատահել է Քյոփրուլու Մուհամեդ կոչված մեծ վեզիրի ժամանակ, երբ Կ. Պոլսի հունաց Բարթենիոս պատրիարքը դատապարտվել է իբրեւ Թուրքիայի կառավարության դավաճան եւ իր պատրիարքական զգեստով կախաղան հանվել Բարմախ-կափու կոչված տեղում:

Այդ ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքի ընտրության համար մեծ խռովություն է եղել ժողովրդի մեջ: Բերացի փառասեր Թոմաս վարդապետը ցանկացել է պատրիարք լինել, սակայն ժողովուրդը նրան չէր ընդունել: Նրա հակառակորդները դիմել են մեծ վեզիրին, խոստացել յուրաքանչյուր տարի վճարել 140 000 ստակ (տուրք), միայն թե Թոմասը պատրիարք չլինի, այլ թույլ տրվի ընտրել իրենց ցանկացած անձին: Թոմասը եւս դիմել է մեծ վեզիրին, խոստացել վճարել յուրաքանչյուր տարի 400 000 ստակ, որ Բ. դուռն իրեն հաստատի Կ. Պոլսի պատրիարք՝ այն նոր իրավասությամբ, որ Երուսաղեմի պատրիարքը եւս ենթարկվի իր իշխանությանը: Խոշոր գումարը հրապուրել է մեծ վեզիրին՝ մերժելու ժողովրդի պահանջը եւ Թոմասին սուլթանի բերրաթով հաստատելու Կ. Պոլսի պատրիարք, ինչպես նաեւ Երուսաղեմի պատրիարքության վրա գերիշխանություն շնորհելու: Թոմասն իր կաշառքով գրված աթոռը պահպանելու համար շրջապատել է իր պատրիարքարանը մի խումբ թուրք զինվորներով, որոնց թոշակն ինքն է տվել՝ ամեն օր 20 քսակ արծաթ:

Այս ամենը գրգռել է ժողովրդի բարկությունը մի կողմից եւ Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքի նախանձը՝ մյուս կողմից: Նա միաբանվել է Թոմասի հակառակորդների հետ, որոնք փաստաթուղթ են կազմել, ստորագրել, երդվել, որ ամեն միջոց գործ դնեն՝ Թոմասին ոչնչացնելու համար: Այս Ասատուրը նույն՝ վերը նշված Ասատուրն է, որ երկու պղնձե կարասների մեջ ոսկի եւ արծաթ էր թաքցրել: Կաշառքները չեն օգնել, որովհետեւ որքան իրենք տվել են, Թոմասը կրկնապատիկն է տվել: Որոշել են մատնել Թոմասին՝ ամբաստանելով նրան որպես քաղաքական հանցավորի, իբր թե նա «ֆրանկների» հետ գաղտնի հարաբերություններ ունի, տերության դեմ որոգայթներ է լարում եւ այլն: Մատնությունը հասցրել է նրանց ցանկացած նպատակին. կառավարությունը Թոմասին կալանավորել եւ գցել է մահապարտների բանտը:

Այդ ընթացքում Թոմասի կուսակիցները դեգերել են թուրք պաշտոնյաների դռներում, մեծ գումարներ ծախսել՝ փորձելով ազատել Թոմասին: Սակայն նրանց հակառակորդներն ավելի ճարպիկ են գտնվել: Նրանք կաշառել են մեծ վեզիրի փոխանորդ Սինան փաշային եւ նրա գիտությամբ, բանտի պահապանների ձեռքով սուրճի մեջ թույն խառնելով, սպանել Թոմասին: Պատրիարքի մարմինը մի քանի օր մնացել է անթաղ՝ բանտի դռան հրապարակի վրա ընկած, հետո գցել են ծովը: ➥ էջ 8

Քրիստոսի Ծնունդը

➥ էջ 6

Պատասխանել կարող ենք միայն ի սրտե ընդունելով այդ ողբերգության խորությունը, սրությունն այն սարսափի, որ մեր մեղքերի պատճառով Աստծո Որդին, որ ննջում էր Հոր երանավետ ծնկներին, պետք է մարդ դառնար ու մահանար, այն էլ՝ սարսափելի մահով, որի մասին մենք այժմ արդեն կարող ենք պատկերացում կազմել՝ հենց վերջին տասնամյակների պատմությունից, որովհետեւ, Աստված իմ, որքան մարտիրոսներ հողի բաժին դարձան մարդկության ատելության եւ անտարբերության պատճառով: Մենք պետք է սթափվենք ու հիշենք, որ Աստծո սիրուն մենք կարող ենք պատասխանել միայն ապաշխարությամբ, այսինքն՝ պետք է նայենք մեր ներսը, հասկանանք մեր պատասխանատվությունը Քրիստոս Փրկչի մարդեղանալու եւ խաչվելու հանդեպ եւ սկսենք ապրել այնպես, որ արժանի լինենք Նրա զոհաբերումին, Նրա Խաչի սիրուն: Եվ դա պետք է արտահայտվի ոչ միայն մեծ գործերով, այլեւ առօրյա մեր կյանքում, որովհետեւ Ավետարանում սիրո մասին ասվածը, թե՝ «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13), կարող ենք օգտագործել մշտապես: «Կյանքը տալ» չի նշանակում անպայմանորեն «մահանալ». դա առաջին հերթին նշանակում է ողջ կյանքը նվիրաբերել մի նպատակի, որ մեկ ուրիշ մարդու համար կյանքը դառնա հնարավոր կամ տանելի, որ մարդը հենարան ունենա, մխիթարություն, ուրախություն, որ մարդը նյութապես չմեռնի մեր աչքի առաջ, չսովի, չմրսի ցրտին, անտուն չմնա ու լքված: Դա չի նշանակում մահանալ մահով, դա նշանակում է քո ներսում քեզ մեռցնել, մոռանալ քեզ, եւ հիշելով ուրիշին՝ քեզ պահել ըստ արժանվույն:

Եվ այսպես՝ Աստված սիրեց մեզ: Մի՞թե մենք չենք կարող այդպիսի սիրուն պատասխանել մեր կյանքի փոփոխությամբ: Ուստի պետք է սկսել եւ Եկեղեցի կառուցել, եւ այդ սիրուն արժանի հասարակություն:

Աստված հավատում է մեզ: Աստված մեզանից սպասում է ամեն ինչ: Նա մեզանից ամեն ինչի հույս ունի եւ սիրում է մեզ Իր ողջ կյանքով ու մահով: Հանուն դրա դառնանք արժանի մեր Փրկչին ու հենց մեզ, քանզի Աստված, մեզ այդպես սիրելով, հնչեցնում է մեր սեփական արժանիքները, խոսում նրա մասին, որ մենք Նրա համար արժեք ենք: Լինենք արժանի ինքներս մեզ, լինենք արժանի Աստծո սիրուն եւ սիրուն ու ողորմությանն այն մարդկանց, որոնք մեզ շրջապատում են: Թող Քրիստոսի Ծնունդը դառնա մեզ համար զարթոնք՝ նոր ուժով, նոր խորությամբ ըմբռնելու մարդու մեծությունը, որովհետեւ Աստված, մարդ դառնալով, մեզ ցույց տվեց, որ մարդն այնքան խորն է, այնքան լայն, այնքան անհատակ, որ կարող է միավորվել Աստծո հետ: Ահա թե ովքեր ենք մենք, եւ թե ով է ՆԱ:

Եկեք հիշենք մարդու մեծության մասին՝ հաշվի առնելով յուրաքանչյուրիս եւ ոչ թե հենց միայն ինքներս մեզ, որովհետեւ մեր մեջ էլ կարող ենք տեսնել մեր մեղքերը: Եվ եկեք հիշենք այդ մասին, երբ նայելու լինենք մեր շուրջը գտնվող մարդկանց, նաեւ նրանց, ովքեր մեզ համար տհաճ են, թանկ չեն, մեզ համար միեւնույն են, երբեմն նույնիսկ՝ զզվելի: Կանգ առնենք ու ասենք՝ այս մարդը կոչված է սրբապատկեր լինելու, Քրիստոսի կենդանի սրբապատկերը, նա Սուրբ Հոգու տաճարն է, եւ նրան հավատում է Աստված: Նրան Աստված այնպես է հավատում, որ Իր Միածին Որդուն ուղարկեց մահվան, որպեսզի փրկի այս մարդուն՝ այս տղամարդուն, այս կնոջը, մի խոսքով՝ բոլորիս: Ամեն:

Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

Երուսաղեմի պատմական նշանակությունը հայերի համար՝ ըստ Ռաֆֆու հրապարակախոսական եւ գրական-քննադատական հոդվածների

↩ էջ 7

Դրանով չի վերջացել խռովությունը: Երկար ժամանակ Թոմասի կուսակիցների եւ հակառակորդների միջեւ կռիվը շարունակվել է: Վերջիններից շատերը բանտարկվել են՝ որպես մարդասպաններ: Անդադար մեկը մյուսին ամբաստանելով՝ կալանավորել էին տալիս, եւ այդ ամենն ավելի շահավետ էր թուրք պաշտոնյաներին, քանի որ ամեն անգամ ահագին տուգանքներ եւ կաշառքներ են ստացել:

Եվ այսպես, շարունակում է Ռաֆֆին, հիշյալ երկպառակությունները չեն վերջացել, այլ շարունակվել են Թոմասի հակառակորդների եւ Աստվածատուր պատրիարքի միջեւ, քանի որ պատրիարքից պահանջել են վճարել այն գումարները, որ գործ էին դրել Թոմասին բանտում սպանելու համար: Իսկ Աստվածատուր պատրիարքը ցանկացել է այդ գումարը բաժանել Կ. Պոլսի 5 եկեղեցիների միջեւ, որպեսզի նրանք վճարեին ժողովրդի միջոցներից:

Այս երկպառակությունների արդյունքում մի քանի տարի հուզման մեջ է եղել Կ. Պոլսի հայ հասարակությունը: Կռիվը հանդարտվել է այն ժամանակ, երբ Երուսաղեմի պատրիարքը վերջապես հանձն է առել վճարել այն գումարի իր մասը, որ օգտագործվել էր Թոմասին սպանելու համար:

Վերոհիշյալ աղետալի պատմությունը, Ռաֆֆու ներկայացմամբ, մի փոքրիկ հատված է միայն Երուսաղեմի վանքի ընդարձակ պատմությունից, որ բովանդակում է իր մեջ շատ այդպիսի եւ դրա նման սարսափելի իրադարձություններ: Օրինակ՝ Եղիազար Այնթափեցին, որ Երուսաղեմի վանքում գտել էր Աստվածատուր պատրիարքի թաքցրած գանձերը, նույն այդ գանձերը ծախսել է Աստվածատուր պատրիարքին աթոռից հեռացնելու համար: Սակայն դրանով նա չի բավարարվել, ինչպես նշում է հրապարակախոսը: Նա, ահագին կաշառքներ տալով սուլթանի մեծ վեզիրին, կաթողիկոս է ընտրվել, նստել Երուսաղեմում՝ հակառակ Սսի եւ Էջմիածնի կաթողիկոսարանների: Այնուհետեւ հեղինակը նշում է, որ Եղիազարի այդ փառասիրական վարմունքը բոլորովին հակասում էր մեր Եկեղեցու հնավանդ սովորություններին, քանի որ Երուսաղեմում միայն պատրիարքներ կարող էին իշխել եւ ոչ թե կաթողիկոսներ:

Երուսաղեմում հաճախ այն աստիճանի անիշխանություն է տիրել, որ միաբաններն ու կառավարիչներն անխնա վատնել են ամեն ինչ: Եվ հեղինակն օրինակ է բերում մի իրադարձություն, որ տեղի է ունեցել Գրիգոր պատրիարքի օրերին: Այդ ժամանակ վանքի արծաթեղենը, սրբազան անոթները, խաչերը, սրբոց մասունքները վաճառվել են, ինչպես Ռաֆֆին է նշում, «շռայլ միաբանության ծախքերը լցուցանելու համար»: Երբ ամեն ինչ սպառվել է, սկսել են ահագին տոկոսներով պարտքեր վերցնել եւ Երուսաղեմի նվիրական վայրերը, մինչեւ անգամ սուրբ Հակոբա վանքը, մահմեդականների մոտ գրավ դնել: Պարտքերն այն աստիճանի են աճել, որ հասել են 800 «քսակ» ոսկու: Մահմեդականները կամեցել են վաճառել հայոց սրբավայրերը, որպեսզի իրենց տված գումարները հետ ստանան: Հույն աբեղաները «լավ մուշտարի» են եղել՝ այդ սրբավայրերը գնելու համար: Այդ ժամանակ նույն Գրիգոր պատրիարքը, որ կոչվել էր «շղթայակիր»՝ պարանոցին երկաթե հաստ շղթա կրելու եւ այն երկաթե կողպեքով կողպելու համար, կանգնել էր Կ. Պոլսի եկեղեցիների դռների առջեւ եւ արտասուքն աչքերին աղաղակել. «Ազատեցեք, ազատեցեք, Երուսաղեմը գերության մեջ է»: Այդ շղթան նա կրել է մի ամբողջ 8 տարի, մինչեւ կարողացել է հայոց բարեպաշտ ժողովրդից հավաքել 800 «քսակ» ոսկին, վճարել մահմեդականների պարտքերը, ազատել Երուսաղեմը գերությունից:

Եվ այդպես, ընդգծում է հեղինակը, մշտապես պարտքեր են ունեցել եւ շարունակ ժողովուրդն է վճարել այդ գումարները: Եվ չկա մի բարիք, որ Երուսաղեմը տված լինի ժողովրդին: Ընդհակառակը, Երուսաղեմի վանքը եղել է եւ է հայերի համար երկպառակության աղբյուր, այսպես կոչված, «կռվի բույն», որտեղից խռովությունները երբեք չեն պակասել: Եվ դա հեղինակը բնական է համարում՝ չհասկանալով, թե «ի՞նչ կնշանակի Հայաստանի սահմաններից դուրս, Հրեաստանի մի քաղաքում, ուր ոչ մի հայ ընտանիք չկա, պահպանել վանք, միաբանություն, ավելի՞ մի ամբողջ պատրիարքություն: Իսկ նրանից մի քանի քայլ հեռու գտնվում են Սսի կաթողիկոսարանը, Կ. Պոլսի պատրիարքարանը, Աղթամարա կաթողիկոսարանը եւ զանազան կրոնական միաբանություններ: Բնական է, որ նրանց միջեւ կռիվներ կծագեին իշխանության եւ շահերի միմյանց հետ ընդհարումների պատճառով»: Եվ դա բավական չէ. Երուսաղեմի հայոց վանքի միաբանությունը գրեթե մշտապես ընդհարումներ է ունեցել նաեւ հույն եւ լատին կրոնավորների հետ: Օրինակ՝ հայերը կամեցել են տոներին առաջինն իրենք պատարագել, նույնը հույներն են կամեցել, մեկը մյուսին փորձել են խանգարել, եւ նմանատիպ այլ պատճառներ: Եվ, ցավով է նշում Ռաֆֆին, որ այդ ամենը կատարվել է սեր եւ խաղաղություն քարոզող Փրկչի գերեզմանի վրա:

Թուրքիայի կառավարությունն իր հերթին ներողամիտ է եղել այդ անկարգությունների նկատմամբ, քանի որ դա բխել է իրենց շահերից: Նախ՝ քրիստոնյաների համերաշխությունն իրենց օգուտ չէր, մյուս կողմից էլ՝ այդ կռիվներից նրանք մեծ շահույթներ էին ստանում: Այսպես՝ Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Մոկացու օրերին մի անգամ հայերը պետք է հույներից առաջ կատարեին Զատկի տոնը, սակայն հույները, կաշառք տալով տեղի փաշային, արգելել են դա: Հայոց պատրիարքն ստիպված 20 հազար դահեկան կաշառք է տվել նույն փաշային, որ թույլ տրվի Զատկի տոնը հայոց տոնացույցի համաձայն կատարվել:

Կ. Պոլսի հայոց պարբերականների էջերում շատ կան նման պատմություններ, երկպառակությունների օրինակներ, որ կատարվել են Երուսաղեմի վանքում, որոնք, հայրենասեր գրաքննադատի խոսքով, շատ թանկ են նստել հայ ժողովրդի վրա թե՛ նյութապես եւ թե՛ հոգեպես:

Անուշ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեությունը բիոէթիկայի բնագավառում: Մարդու իրավունքներն ու արժանապատվությունը՝ բիոէթիկական հիմնահարց

↩ էջ 4

Վերհիշելով «բժիշկ-մահ» Գ. Գեւորգյանի ինքնապաշտպանական ճառն այն մասին, որ «... նա խախտել է մարդու կյանքի իրավունքը այդ մարդու գրավոր խնդրանքի հիման վրա», հարց է առաջանում. իրավունք ունե՞ր բժիշկը թեկուզ գրավոր խնդրանքի եւ համաձայնության հիման վրա արագացնելու հիվանդի մահը:

Երրորդ՝ իսկ ինքը՝ մարդը, իրավունք ունի՞ իր սեփական կյանքի նկատմամբ ոտնձգություն կատարելու, խախտելու կյանքի սրբագործվածության, անձեռնմխելիության իրավունքը:

Ահա հարցերի մի շարք, որոնք լուծելու համար անհրաժեշտ է ուժերը համախմբել:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի հրահանգների համաձայն՝ մեր նպատակը պետք է լինի ոչ միայն ուսանողներին, այլեւ հասարակության ամենալայն խավերին տեղեկացնել, իրազեկել բիոէթիկայի հիմնական սկզբունքների, նորմերի, հռչակագրերի, կոնվենցիաների բովանդակությունը:

Հումանիզմի գաղափարներն այսօր ներթափանցում են մարդկային եւ միջազգային համագործակցության բոլոր ոլորտները: Ինչպես նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության մեջ, մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը, արդարության, փոխադարձ հարգանքի զգացումները պետք է լայնորեն արմատավորել հասարակական գիտակցության մեջ:

«Մարդու պատիվը, արժանապատվությունը պահելու համար հարկ է տարածել բարեկրթություն, կրթվածություն, մարդասիրական մտածողություն հասարակության բոլոր խավերի մեջ: Ըստ որում՝ աշխարհը պետք է հենվի մարդկության ինտելեկտուալ եւ բարոյական միասնության վրա, գիտությունն ու բարոյականությունը չպետք է իրարից տարանջատվեն»:

1947 թ. Նյուրնբերգյան ռազմական դատարանը բացահայտեց մի պարզ բան, թե ինչքան անհուսալի, փխրուն ու թույլ են էթիկական եւ իրավական բոլոր արգելքները, որոնք կոչված են պաշտպանելու մարդկանց կյանքը գիտության նվաճումների կիրառումից:

Հիպոկրատեսի երդումը բոլորովին էլ արգելք չդարձավ նացիստական բժիշկների համար, երբ անցկացնում էին փորձարկումներ (գիտափորձեր) դատապարտյալների վրա:

Նյուրնբերգյան վարքականոնի (կոդեքսի) սկզբունքային պահանջներից մեկն էլ դարձավ այն, որ արգելվեց առանց մարդու ինքնակամ գրավոր համաձայնության (իրազեկված, տեղեկացված համաձայնության)՝ նրան դարձնել գիտափորձերի, փորձարկումների առարկա կամ մասնակից:

Առ այսօր լարված, դրամատիկ իրադարձություններ են ծագում երկիր մոլորակի այս կամ այն հատվածում: Ահա մարդկության դրամատիկ կամ նույնիսկ ողբերգական ճակատագրի փիլիսոփայական վերլուծությունը ստիպեց ոչ միայն փիլիսոփաներին, այլեւ բժիշկներին, կենսաբաններին, քաղաքագետներին, իրավաբաններին, աստվածաբաններին... խոսել մարդկության հավանական ինքնասպանության, ավարտի մասին:

Սրան զուգահեռ՝ անհրաժեշտություն զգացվեց բարոյափիլիսոփայական վերահիմաստավորման ենթարկել գիտության եւ տեխնիկայի առաջադիմական թվացող ձեռքբերումները, նորագույն տեխնոլոգիաները, այդ թվում՝ կենսաբանության եւ բժշկության մեջ: Որոշ մտածողներ (Էկխարտ Տոլլե, Օշո, Սաթգուրու եւ այլք) նույնիսկ վախ արտահայտեցին այն մասին, որ որոշ հայտնագործությունների ներդրումը կարող է արագացնել երկրի կենսոլորտի կործանումը եւ մարդկային բանականության խեղաթյուրումը:

Մարդկության գլխին այսօր կախված է նաեւ բիոտեռորիզմի վտանգը, որի գործիք կարող են լինել գենետիկորեն փոփոխված բակտերիաները, որոնք կայուն են դեղորայքի ազդեցության նկատմամբ, նաեւ դեղամիջոցներ, որոնք կարող են ջնջել մարդու հիշողությունը:

Անհանգստություն է պատճառում ոչ միայն այն, թե ինչ կարող են մեզ հետ անել այլ մարդիկ, այլեւ այն, թե ինչ կարող ենք անել մենք ինքներս մեզ հետ՝ խախտելով մեր իրավունքները եւ արժանապատվությունը:

Գիտական բժշկության մեջ բիոէթիկայի հումանիստական գաղափարների ներդրման նպատակն է գիտնականների շրջանում արթնացնել «մասնագետի խիղճը», խիղճ, որ հետ կպահի իրենց գենային ինժեներիայի մեթոդներով կենդանիների եւ բույսերի նոր տեսակների եւ առավել եւս ու առաջին հերթին կլոնավորման մեթոդներով մարդ ստեղծելու անհեռատես փորձերից:

Եթե հասարակական գիտակցության մեջ ամրապնդվեն բիոէթիկայի հումանիստական գաղափարները, ապա դա հնարավորություն կտա լուծելու բարդ հարցերի մի հսկայական կծիկ, որն առաջանում է գիտնականների «մեղքով»: Գիտնականներ, որոնք երբեմն բարոյական տեսակետից խիստ կասկածելի գործողություններով մարդկային քաղաքակրթությունը կանգնեցնում են անդունդի եզրին, ավելի՞ հանգեցնում են մարդկության հնարավոր ոչնչացմանն ու վերացմանը: Ահա թե ինչու է այդքան կարեւոր ու անհրաժեշտ ձեւավորել բժիշկ գիտնականների բարոյափիլիսոփայական մտածողությունը (*Биоэтика: вопросы и ответы // Под ред. Б.Г. Юдина и П.Д. Тищенко. М., 2003*):

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 4.01.2022 թ.
Տպաքանակը՝ 1225